Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10931
10932
10933
10934

891.99
Ч-91

63
Ch 2

10934

ԿԱՐԳ
ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑՒՈՅ

ԳԱՍԱԳԻՐՔ

Թեմական եւ ծխական հոգեւոր դպրոցների
եւ ընծայարանների համար։

ԿԱԶՄԵՑ
ԳԻՒՏ ՔԱՀԱՆԱՅ ԱՂԱՆԵԱՆՑ

2013

ՏՓԽԻՍ
Տպ. Մ. Շարադէի || Тип. М. Шарадзе.
1895

Дозволено цензурою Тифлисъ, 30 декабря 1894 г.

97743-ԱՀ

1354-2004

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՊԿՐՏՉԻ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԻՐՔ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Թ. 2184

30 Դեկտ. 1894 ամի

ի Տփխիս

Բարեկրօն Գիտուն քահանայի
Աղանեանց

Աշխատասիրեալն ի Զհնչ „Կարգ Աստուածպաշտութեան Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ" Նորին Վեհափառութիւնն յանձնարարեալ էր ի քննութիւն Գերապատիւ Տ. Արիստակէս Եպիսկոպոսի Դաւթեան, որոյ քննեալ եւ զարդիւնս քննութեան առաջի արարեալ Վեհափառ Հայրապետի Ազգիս ընդ իւրում հաւանութեան ետ զիւրն կարծիս, եթէ կարէ տպագրիլ երկդ: Ուստի՝ ըստ պատուիրանի Նորին Վեհափառութեան Գիտանս յայտ առնէ Ձերումդ բարեկրօնութեան, եթէ թոյլատրեալ է Ձեզ տալ երկդ ի տպագրել եւ այժմեն իսկ շնորհի Ձեզ իրաւունս յետ տպագրութեան տալ մուծանել ի թիւս արտօնեալ դասագրոց եկեղեցական-ծխական դպրոցաց մերոց:

Պաշտօնակ. Գիտանադպրի՝ Յուսիկ աբեղայ Զոհրաբեան

ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐ ՍՐԲԱԶՆՈՒԹԵԱՆ

Վիճակաւոր Առաջնորդին Հայոց
Վրաստանի և Իմերեթի

Տ. ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՍՈՒՐԲԷՆԵԱՆ

ՀԻՄՆԱԴՐԻ ԸՆԾԱՑԱՐԱՆԻ ԹԵՄԻՍ

Խոնարհաբար նուիրում է

Աշխատասիրողը.

ՅԱՆԿ

Ա. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԻՒՆ։

ա. Ի՞նչ է Աստուածպաշտութիւնը.
բ. Սահմանողը.
գ. Տեսակները.
դ. Եղանակը.
ե. Կոչնակ և զանգակ.
զ. Լեզուն.
է. Հասարակաց Աստուածպաշտութեան բաղկ. մասերը.

Բ. ՍՐԲԱԶԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՍՏՈՒԱԾ-ՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ։

ա. Խաչակնքել.
բ. Երկրպագել և գլուխ խոնարհեցնել.
գ. Ծնրադրութիւն.
դ. Խնկարկել.
ե. Օրհնել խաչով, աւետարանով և այլն։
զ. Թափոր և անդաստան.
է. Նախատօնակ.
ը. Հսկումն.

Գ. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՏԵՂԸ—ԵԿԵՂԵՑԻ.

ա. Արևելեան և արեւմտեան եկեղեցի.
բ. Տաճարի ձեւը.
գ. Եկեղեցու մասերը.

Գաւիթ.
Ատեան.
Դաս.
Աւազան.
Բեմ կամ ամբիոն.
Սեղան.
Վարագոյր.
Խաչկալ.
Ընծայարան կամ խորհրդանոց.
Սարկաւագատուն կամ խորան.
Եկեղեցու հիմնարկեքը.
„ նաւակատիքը.
„ օծումը.

Դ. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՆՆԵՐԸ— ՆՈՒԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ.

ա. Հայրապետ.
բ. Եպիսկոպոս.
գ. Վարդապետ.
դ. Քահանայ.
ե. Սարկաւագ.
զ. Կիսասարկաւագ.
է. Ջահընկալ.
ը. Երգմնեցուցիչ.
թ. Դպիր կամ ընթերցող.
ժ. Դռնապան.

Ե. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ Ս. ՍՊԱՍՆԵՐՆ ՈՒ ԱՆՕԹՆԵՐԸ.

ա. Սկիհ եւ մաղզմայ.
բ. Մասնատուփ.
գ. Բաժակամանն.
դ. Խնկանոց կամ բուրվառ.

ե. Տապանակ կամ խնկամանն.
զ. Խաչվառ կամ վառ.
է. Քշոց.
ը. Խաչ.
թ. Միւռոնաշիշ.
ժ. Կոնք, դոյլ, ղենջակ կամ թաշկինակ.
ժա. Պատկեր.
ժբ. Գրակալ.
ժգ. Աշտանակ, կերոն, մոմ, ջահ.

Զ. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾԱԾՈՒՈՂ ԶԳԵՍՏՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԴԵՐԸ։

ա. Ընդհանուր զգեստներ
Սքեմ
Վեղար
Փիլոն
Գաւազան — օձազարդ եւ հովուական
Մատանի
Հոդաթափ
բ. Սարկաւագի, կիսասարկաւագի եւ դպիրների զգեստներ.
Շապիկ.
Ուրար.
Բազկուրար.
գ. Քահանայի զգեստներ.
Սաղաւարտ.
Շապիկ
Փորուրար.
Գօտի.
Թաշկինակ
Բազպան.
Վակաս.
Շուրջառ կամ նափորտ.
դ. Եպիսկոպոսական զգեստներ.
Թագ կամ խոյր.

Արտախուրակներ.
Եմիփորոն.
ե. Հայրապետական զգեստներ եւ դարդեր.
Կոնքեան.
Արծուէգորգ.

Է. ԱՍՏՈՒԱԾՊԱՀՏՈՒԹԵԱՆ Ս. ԳՐՔԵՐԸ.

ա. ս. Աւետարան.
բ. Ժամագիրք—Հասարակաց կարգ աղօթից.
Ընդհանուր գիտելիք
Գիշեր ժամու աղօթք—Մեկնութիւն.
Գործնական վարժութիւն (Հասարակ օր, կիրակի, մեծ պահք).
Առաւօտեան.—Մեկնութիւն.
Գործն. վարժ. (Հասարակ օր, կիրակի, մեծ պահք)
Արեւագալի—Մեկնութիւն.
Գործնական վարժութիւն.
Երրորդ ժամու՝—Մեկն.
Գործնական վարժութիւն.
Վեցերորդ ժամու—Մեկն.
Գործն. վարժութիւն.
Իններորդ ժամու—Մեկն.
Գործն. վարժութիւն.
Երեկոյեան—Մեկն.
Գործն. վարժ. (Հասարակ օր, կիրակնամուտ)
Խաղաղական—Մեկն.
Գործն. վարժութիւն.
Հանգստեան—Մեկն.
Գործն. վարժութիւն.
գ. Շարական
Զայներ.
Համառօտութիւններ.
դ. Ճաշոց գիրք.
ե. Խորհրդատետր կամ պատարագամատոյց.
ս. Պատարագ.

Սահմանողը.
Նիւթը.
Կատարողը.
Օրերը.
գ. Տաղարան.
է. Տօնացոյց.
ը. Մաշտոց—Առ ձեռն եւ Մայր.
թ. Կանոնագիրք.
ժ. Յայսմաւուրք.

Ը. ԱՍՏՈՒԱԾՊԱՀՏԱԿԱՆ ԾԷՍԵՐ.

ա. Խորհուրդների կատարման ծէսերը—Եօթն խորհուրդ
բ. Տօները.
Ընչարժ.
Շարժական.
Տէրունական.
Աստուածածնի.
Սրբոց.
Տօնական յատուկ շաբաթներ.
Աւագ տօներ.
գ. Նիւթական եկեղեցու կազմակերպութիւնը.
դ. Ս. Խաչի, սրբոց մասունքների եւ պատկերների յարգութիւնը.
ե. Պահք եւ ծոմ.
Պահքի տեսակները.
զ. սրբազան արարողութիւններ.
Խաչալուայ.
Ննջեցելոց թաղումն.
Մաղթանք.
Կալօրհնէնք եւ հնձանօրհնէնք.
Մատաղ.
Զգեստ, սկիհ եւ մաղզմայ օրհնել.
է. Հոգեւոր աւանդութիւններ.
Մասն.
Ժամոց, մշելիք, գանձանակ.
Ուխտ.

Սեղան.
Ուռ բաժանելը.
Կարագ բաժանելը.
Հրավառութիւն.
Աղաւնի թռցնելը:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

(Բացի մեր հին վատենագրութիւնից այս դասագիրքը կազմելիս օգուտ եմ քաղել նաեւ հետեւեալ նորագոյն գրուածներից):

Այվազեան Գ. եպ. Աստուածպաշտութիւն (անտիպ.)
Գանձարան ուխտականութեան. Ն. Նախիջեւան, 1790.
Գիրք մեկնութեան. Իզմիր, 1759.
Թորոս Ջուղայեցի. Նուիրապետութիւն Հայ. եկեղեցւոյ 1892 Երուսաղէմ (յաւելուած օրացուցի).
— — Խորհուրդ ս. պատարագի 1891 Երուս. (յաւելուած օր.)
Մանդինեան Ստ. ք. Աստուածպաշտութիւն. 1872.
Յոհան Նոտար Կարնեցի. Համառօտ մեկնութիւն ս. պատարագի. 1802 (գրչ.)
Տէր-Սարգսեան Սահ. ք. քննական կրօնագիտութիւն, Կ. Պոլիս 1874.
Օրմանեան Մաղ. եպիս. Ազգ. Հայաստանեայց. Վաղարշապատ, 1886.

Ա. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԻՒՆ

ա. Ինչէ Աստուածպաշտութիւնը:

Աստուածպաշտութիւնը այն ծառայութիւնն է, որ մատուցանում ենք Աստծուն, իսկ Աստուածպաշտութեան կարգը այն արարողութիւններն ու ծէսերն են, որոնք կատարւում են եկեղեցիներում հրապարակով: Մենք պարտաւոր ենք մեր հոգին և զգացմունքը վեր ուղղել դէպի Աստուած և պաշտել նորան բոլոր սրտով, խոստովանելով որ նա է մեր տէրն ու արարիչը և մենք ոչինչ ենք նորա առջև, պէտքէ շնորհակալ լինինք նորա տուած ողորմութիւնների համար, զղջանք մեր մեղքերը, հայցենք նորա գթութիւնն ու օրհնութիւնը և կատարենք նորա պատուէրները:

բ. Սահմանողը:

Աստուածպաշտութեան գլխաւոր հիմնադիրը է մեր տէր Յիսուս Քրիստոսը և նոյնը հաստատեցին առաքեալները, ինչպէս ասում է Պօղոս առաքեալը.—«Կրթեա զանձն քո յԱս-

տուածպաշտութիւն, զի մարմնոյ կրթութիւն՝ առ սակաւ ինչ օգտակար է, իսկ աստուածպաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է, և զաւետիս կենաց ունի՝ զարդիս և զհանդերձելոյն»։ Իսկ մեր եկեղեցու աստուածպաշտութեան կարգերի ու արարողութիւնների հիմքը դրին Ս. Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալները, որոնք նորա ապագայ կարգաւորութիւնը յանձնեցին իրանց յաջորդ եպիսկոպոսներին։ Աստուածպաշտութեան կարգերը ճոխացրեց և կարգի դրեց Ս. Գրիգոր Լուսաւորիչը, իսկ այնուհետև Գիւտ կաթուղիկոս, Ս. Սահակ և Մեսրովպ թարգմանիչներ և ս. Յովհան Մանդակունի հայրապետը զարդարեցին զանազան երգերով, աղօթքներով և ընթերցուածներով։

գ. Տեսակները։

Աստուածպաշտութիւնը երկու տեսակ է կատարւում.—մասնաւոր և հասարակական։

Մասնաւոր. մարդս պարտաւոր է պաշտել Աստծուն առանձին, բանալով իւր հոգին նորա առջև, յայտնելով նորան իւր կարիքները և աղօթելով ու կարդալով նորա խօսքը. այս աղօթքը և պաշտամունքը, որ կատարւում է տնային կերպով, անուանւում է *մասնաւոր։* Մասնաւոր է և այն պաշտօնը, որ մարդս կատարում է իւր ընտանիքի հետ՝

զերդաստանի մէջ բարեպաշտութեան զգացմունքը վառ պահելու և Աստուծոյ օրհնութիւնը ստանալու համար։

Հասարակական. բացի մասնաւոր աղօթքից մենք պարտական ենք միաբանութեամբ պաշտօն մատուցանել Աստծուն եկեղեցիների մէջ հասարակաց բարօրութեան և խաղաղութեան համար. այդպիսի աղօթքը, որ կատարւում է որևէ տեղի բոլոր հաւատացեալների ներկայութեամբ դորա համար սահմանուած տեղերում և նշանակուած պաշտօնեաների ձեռքով, կոչւում է *հասարակական* աղօթք։ Միաբանական աստուածպաշտութիւնը մի գեղեցիկ միջոց է հաւատի մէջ յառաջադիմելու և հաւատացեալների մէջ բարեպաշտութեան և մարդասիրութեան զգացմունքը զօրացնելու։

դ. Եղանակը։

Աստուածպաշտութեան արտաքին նշաններն են՝ խաչակնքելը, չոքելը, որ խոնարհութեան նշան է, ծնրադրութիւնը, որ նշան է մեր ոչնչութեան Աստուծոյ առջև, արտասուելը, կարդալը, սաղմոսելը, բարձրաձայն աղօթելը և այլն. բայց եթէ այս արարողութիւնները կապուած չեն մեր ներքին հոգեկան պաշտօնի հետ, այն ժամանակ մեր աստուածպաշտութիւնը ճշմարիտ չէ, այլ միայն

մի ձևական բան. ուստի և աստուածպաշտութիւնը պէտք է կատարել խորին յարգանքով, ուշադրութեամբ, հեզութեամբ, հոգու և մարմնի մաքրութեամբ և ջերմեռանդութեամբ։

ե. Կոչնակ եւ զանգակ։

Հասարակաց Աստուածպաշտութեան հրաւիրելու համար հին ժամանակ գործ էր դնւում կոչնակը, որ փայտեայ կամ երկաթեայ տախտակաձև մի գործիք էր, որի վերայ ձողը խփելով՝ հաւատացեալներին ժամ էին հրաւիրում։

Իսկ վերջին ժամանակները կոչնակին փոխարինեց զանգակը։

Կոչնակը յիշեցնում է մեզ հրեշտակապետի փողը, որ աշխարհիս վերջին պէտք է կանչէ բոլոր կենդանիներն ու մեռեալները Աստուծոյ ահեղ դատաստանի առջև։

Մեզանում զանգակը ընդունուած է հընչեցնել իւրաքանչիւր ժամերգութիւնից առաջ, Ս. պատարագից առաջ, անդաստանի, նախատօնակների, յուղարկաւորութեան ժամանակ և այլն։

զ. Լեզուն։

Հայաստանեայց եկեղեցին Աստուածպաշտութիւնը կատարում է հայերէն գրաբար լեզուով, որպիսի լեզուով գրուած են մեր եկեղեցական բոլոր գրքերը, և երբէք թոյլատրուած չէ աշխարհաբար լեզուով կատարել։

է. Հասարակաց Աստուածպաշտութեան բաղկացուցիչ մասերը։

Հասարակաց Աստուածպաշտութիւնը հետևեալ հոգևոր գրուածքներից է բաղկանում.

Ա. *Ս. Գիրք*, որից կարդացւում են՝ *Հին կտակարանից* նշանաւոր դէպքերը, օր. Մովսիսի, Յովբի, Սողոմօնի, Մարգարէների, Յեսուի, Թագաւորների և Մակաբայեցիների գրքերից և Սաղմոսը ամբողջ. իսկ *Նոր կտակարանից*՝ չորս Աւետարանը լիովին, Գործք առաքելոցը և Առաքելական թղթերը։

Բ. *Հոգևոր երգեր կամ շարականներ*, որոնք բաղկացած են ութն ձայներից—աձ. ակ. բձ. բկ. գձ. գկ. դձ. և դկ. բացի սոցանից կան նաև *ստեղի* կոչուած ծանր շարականներ, և առանձին ձայնով այլ և այլ հոգևոր երգեր։

Գ. *Աղօթքներ*.

Դ. *Սրբագործութիւն*.

Ե. *Կրօնական դաստիարակութիւն* կամ *քարոզութիւն*։

Գրադարան Ներսես Մեծի Վաղարշապատ

Բ. ՍՐԲԱԶԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Աստուածպաշտութեան ժամանակ կատարուում են հետևեալ սրբազան գործողութիւնները.

Ա. *Խաչակնքել անձը*, որով յիշում ենք մեր Փրկչի խաչի վերայ մահը մարդկային ազգի փրկութեան համար և խնդրում ենք Աստուծոյ ողորմութիւնը։

Բ. *Երկրպագութիւն եւ գլուխ խոնարհեցնելը*, որով ցոյց ենք տալիս մեր ծառայութիւնը և հեզութիւնը Աստուծոյ առջև, խոստովանում ենք մեր մեղաւոր լինելը, իսկ միւս կողմից նշան է, որ մենք մասնակցում ենք աստուածպաշտական աղօթքներին և խնդրուածքներին։

Գ. *Ծնրադրութիւն*, որով ցոյց ենք տալիս մեր անպայման խոնարհութիւնը Աստծու առաջ և հնազանդութիւն նորա կամքին, դէպի որը մենք արժանի չենք մեր աչքերը բարձրացնել։

Դ. *Խունկ տալ*, ընդհանրապէս մարդիկ խունկը ծխելով նպատակ ունին իրանց յարգանքներն ու նուէրները մատուցանել Աստծուն, քանի որ անձամբ մերձենալ չեն

կարող նորան. բայց մեր մէջ խնկարկութիւնը երկու նշանակութիւն ունի. մէկը աստուածպաշտութեան և մեր ջերմեռանդ աղօթքի նշան է, ինչպէս ասում է Դաւիթ մարգարէն «Ուղիղ եղիցին աղօթք իմ, որպէս խունկ առաջի քո տէր»։ և միւսը ժողովրդի օրհնութեան, այսինքն խնկարկելով եկեղեցուն և ժողովրդին, ցանկանում ենք, որ Աստուծոյ օրհնութիւնը իջնի դոցա վերայ և իւրաքանչիւրի աղօթքը խնկան ծխի նման բարձրանայ առ Աստուած։

Խնկարկութիւնը տեղի ունի աստուածպաշտութեան հետևեալ միջոցներին. Տէր զի բազում-ին, ամեն անգամ ս. Աւետարանը կարդալիս, Օրհնութեան շարականի սկզբին և Հոգեգալստեան շարականին, Փառք 'ի բարձունս երգելիս, Լոյս զուարթի երկրորդ մասը երգելիս, ս. Աստուածին, ս. Պատարագին՝ Սպասը դնելիս, ս. Աստուածին, Վերաբերման և գլխաւոր երգերի ու աղօթքների ժամանակ, Անդաստանի տեառնագրութեան ժամանակ և ամեն անգամ «Կեցո» տալիս։

Ե. *Օրհնել խաչով*. Աւետարանով և սրբոց մասունքներով՝ Տիրոջ օրհնութեան նշան է։

Զ. *Թափօր և անդաստան*, որի միջոցին տեառնագրում են աշխարհիս չորս կողմերը և

այդ կատարւում է տէրունական հանդիսաւոր տօներին, երաշտութեան և մահտարաժամի ժամանակ։

Է. *Նախատօնակ*. որովհետև հայոց տոմարական հաշուով օրը հաշւում է երեկոյից մինչև միւս երեկոյ, ուստի մեր եկեղեցին տէրունական և նշանաւոր սրբերի տօնախմբութեան նախընթաց երեկոյին առանձին տօն է կատարում զգեստաւորուած և եկեղեցական սպասներով, երգելով միւս օրուայ շարականների մի մասը և դա կոչւում է *Նախատօնակ*։

Ը. *Հսկումն*. Տէրունական մեծ տօների նախընթաց գիշերը կատարւում է միւս օրուայ ժամերգութեան մի մասը որ և կոչւում է հսկումն, այսինքն արթնութիւն։

Գ. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՏԵՂԸ—ԵԿԵՂԵՑԻ

Աստուածպաշտութեան գլխաւոր տեղը տաճարն է կամ եկեղեցին, որ օրհնւում է և ս. Մեռոնով օծւում եպիսկոպոսի ձեռքով, ուր կատարում են եկեղեցւոյ սուրբ խորհուրդներն ու սրբագործութիւնները, իսկ Աստուածպաշտութեան քանի մի մասերն ու խորհուրդները, ի պահանջել հարկին, կարելի է կատարել նաև եկեղեցուց դուրս։

Եկեղեցին կամ տաճարը նաև հաւատացեալների ժողովն է, որոնք միաւորուած են մի հաւատով և գտնւում են մէկ հոգևոր հովուապետի հովանաւորութեան ներքոյ։

Քրիստոնէական եկեղեցիները երկու գլխաւոր մասի են բաժանւում-աշխարհագրական և ազգագրական կողմից, *Արևելեան* և *Արևմտեան*. Արևելեան կոչւում է այն եկեղեցին, որ հիմնեց Քրիստոս Երուսաղէմի մէջ, որտեղից նորա առաքեալներն ու աշակերտները տարածեցին Հայաստան, Փոքր և Մեծ Ասիա, Յունաստան, Եգիպտոս և բոլոր Արևելեան կողմերը և որի գլխաւոր ներկայացուցիչներն են Հայ և Յոյն մեծ եկեղեցիները, որոնք ունին միևնոյն Աստուածային գլուխը՝ Քրիստոս, բայց կատարելապէս տարբերւում են միմեան-

ցից ազգով, լեզուով և ծէսերով։ Իսկ Արևմըտեան եկեղեցին այն է, որ Հռոմի մէջ հիմնուելով հետզհետէ տարածուեցաւ Եւրոպա, Աֆրիկա և յետոյ Ամերիկա, ուստի կոչւում է նաև Հռոմէական, Լատինական կամ Պապական եկեղեցի, որի գլուխն է Հռոմի եպիսկոպոսը կամ պապը։

Տաճարի ձեւը։

Հայկական եկեղեցին կամ տաճարը շինուած է լինում երկար ու քառանկիւնի ձեւով, ըստ մեծի մասին խաչաձև. ուղղուած արևմուտքից դէպի արևելք, վասնզի արևելքից ենք սպասում արևի ծագման, այսինքն է Քրիստոսի երկրորդ գալստեան։ Եկեղեցու գլխին հաստատուած է վեղարաձև կամ թուղիկէն կամ գմբէթը, որի ծայրին ամրացրած է լինում Քրիստոսի սուրբ խաչը, որպէս յաղթութեան դրօշակ ընդդէմ հեթանոսութեան։

Եկեղեցու գլխաւոր մուտքը շինւում է արևմտեան կողմը։

Եկեղեցին օծուելիս միշտ նուիրւում է 'ի պատիւ որ և է տօնի կամ որ և է սուրբի անուան։

Եկեղեցու մասերը.

Տաճարը բաժանւում է երեք մասը.

ա. *Գաւիթ* բ. *իսկական տաճար* կամ

ատեան և գ. *բեմ կամ ամբիոն.*

ա. *Գաւիթ.* սա մի առանձին շինութիւն է բուն եկեղեցու արևմտեան պատին կից, որ հին ժամանակներում մեր բոլոր եկեղեցիքն ունէին տաճարից որոշ. պատարագի ժամանակ, երբ սարկաւագը երգում էր «մի ոք յերախայից» երգը՝ ներելի մեղքի տէր ապաշխարողները եկեղեցուց դուրս գալով այդտեղ էին աղօթում։

Միւս երկու մասերը բուն եկեղեցու մէջն են, այն է՝ բ. *Ատեան*, կանանց և տղամարդկանց բաժանմունքներով և գ. *դաս.*

Ատենի ետևի մասը յատկացրած է կանանց և բաժանուած է պատնէշով. սա երբեմըն երկյարկ է լինում, որի վերին յարկը կոչւում է *վերնատուն*։

Իսկ ատենի առջևի մասը-դասը, որ կից է բեմին և սովորաբար եկեղեցու յատակից մի քանի մատ բարձր է և աջ և ձախ կողմերից վանդակապատ, յատկացրած է բացառապէս աստուածպաշտութեան համար. այնտեղ կանգնում են հոգևորականներն ու կատարում ժամերգութիւնը՝ դասէդաս, իսկ հանդիսաւոր տօներին և նախատօնակներին ու անդաստանի ժամանակ՝ մէջ տեղը։

Դասերից սեղանի աջ կողմինը կոչւում է

աջակողմեան կամ վերին դաս, ուր դրուած է լինում Հայրապետի կամ առաջնորդի *զահը* և ուր կանգնում է միշտ աւագ կամ աւագագոյն քահանան։ Իսկ միւս դասը կոչւում է *ձախակողմեան* դաս։

Եկեղեցու այդ մասնում՝ աջակողմեան դասի հիւսիսային որմի մէջ է լինում զետեղուած և *մկրտութեան* քարեայ *աւազանը* հաւատացեալներին մկրտելու համար, որը օրհնում է և ս. Մեռոնով օծում եպիսկոպոսը։

Եկեղեցին լինելով ամեն հաւատացեալների մայրը՝ աւազանը օրինակ է արգանդի, որ ծնում է մարդիկ դէպի յաւիտենական կեանքը։

Բեմ կամ *ամբիոն*. դասի առջևից, տաճարի արևելեան կողմը եօթն աստիճաններով բարձրացած է լինում, որի վերայ կատարւում են սուրբ պատարագի արարողութիւնները, սրբազնագործ հոգևորականների ձեռնադրութիւնը, իւղաբերից Աւետարանի ընթերցումը և քարոզութիւնները։ Այնտեղ իրաւունք ունին բարձրանալ միայն աստիճան ունեցող հոգեւորականները։

Սեղան. բեմի վերայ դէպի արևելք վէմ քարի վերայ ամրացրած է սեղանը, որին մերձենում են միայն սրբազնագործ պաշտո-

նեաներն ու որի վերայ մատուցւում է ս. պատարագը։ Սեղանը պէտք է լինի անշուշտ քարէղէն և հաստատուն և պիտի օծուած լինի ս. Մեռոնով։

Սեղանը Գողգոթա լերան խորհուրդն ունի, ուր խաչուեցաւ Քրիստոս, և այն այրի, որի մէջ թաղուեցաւ նա։

Սեղանի վերայ դրւում է խաչը, ս. Աւետարանը, տէրունական պատկեր, մասնատուփ և ս. Մեռոնը։

Բեմի վերայ շինուած է *վարագոյրը*, որով ծածկում են սեղանը ս. պատարագի սպասը դնելիս, Տէր ողորմեա—ին, երեք տիեզերական ժողովների տօներին «Ով հրաշալի» շարականը երգելիս, Դռնաբացէքի կարգը կատարելիս եթէ եկեղեցին գաւիթ չունի, քառասնօրեայ պահեցողութեան օրերին, ճրագալուցի երեկոներին և աւագ հինգշաբթի, ապաշխարողների կարգը կատարելիս մինչև ս. պատարագի սկիզբը։

Սեղանի ուղղութեամբ տարածւում է *խաչկալը*, որ փայտեայ ոսկեզօծ շինուած է, գլխին խաչ ամրացրած, որից և ստացել է իւր անունը։ Սեղանի աջ և ձախ կողմերից խաչկալի տակը խորանների երկու դռներն են, որոնց վերայ Հայոց եկեղեցիներում նկարուած

են լինում Հայաստանի նախկին լուսաւորիչ-ների՝ ս. Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալ-ների պատկերները և որտեղից վերաբերում են պատարագի ժամանակ ս. Աւետարանը կամ պատարագի ընծաները։

Ընծայարան կամ *խորհրդանոց*։ Սեղանի ներսի կողմը հիւսիսային պատի մէջ հանուած է մի խորշ, ուր պատրաստւում են ս. խոր-հրդի ընծաները կամ սպասը, այսինքն հացն ու գինին և այնտեղից վերաբերւում է ս. պատարագի ժամանակ։ Ընծայարանը յիշեց-նում է մեզ հին ուխտի առաջաւորութեան սեղանը և այն այրը, ուր ծնաւ Քրիստոս։

Սարկաւագատուն, սրբատուն կամ *աւան-դատուն — խորան*. Եկեղեցուն կից կամ առան-ձին մի շինութիւն է, իսկ երբեմն և եկեղե-ցու տակը ներքնայարկ է, ուր պահւում են եկեղեցու սրբազան անօթներն ու զգեստները և ուր զգեստաւորւում են եկեղեցու բոլոր պաշտօնեաները աստուածպաշտութեան կարգը կատարելու համար։ Իսկ այժմ դորան փոխա-րինում են երկու խորանները, որոնք շինուած են լինում բեմի աջ և ձախ կողմերը դասերի հանդէպ։

Եկեղեցու հիմնարկէքը եւ օծումը։

Եկեղեցու թէ հիմքը և թէ նոյն իսկ

եկեղեցին օծում է եպիսկոպոսը մեծ հանդէ-սով, համաձայն կարգաւորութեան Մայր Մաշ-տոցի Հայաստանեայց եկեղեցւոյ։

Հիմնարկէք. — Նախ եպիսկոպոսը վերց-նում է ճարտարապետական լարը և գծում է գետնի վերայ շինութեան ձևը, այնուհետև առնում է բրիչը և մի երես փորում է սահ-մանած տեղը, որ ապա շարունակում է փորել ժողովուրդը։ Հիմնարկէքի այս ձևը առնուած է ս. Գրիգոր Լուսաւորչից, որ ինքն իւր ձե-ռով գծեց Էջմիածնայ Մայր տաճարի և Հռիփ-սիմեան ու Գայիանեան ս. կոյսերի վկայարան-ների տեղը։

Յետոյ եպիսկոպոսը և բոլոր հոգևորական-ները զգեստաւորուելով ժողովրդի ներկայու-թեամբ ձգում է հիմքը, օծելով 16 քար, որոնցից տասներեքը առաքեալների, երկուսը Մարկոս և Ղուկաս աւետարանիչների և մէկը ս. Լուսաւորչի անունով և դնում է հիմքի մէջ իւրաքանչիւրի համար յատկացրած տեղը։

Նաւակատիք օծման։ Հին ուխտի ժամանակ, երբ Սողոմոն թագաւորն աւարտեց Երուսաղէմի տաճարի շինութիւնը՝ նաւակատիք արեց ողջա-կէզներով, այսինքն եկեղեցու շինութեան տօն կատարեց, այսպէս էլ մեր եկեղեցու օծման նախընթաց երեկոյին եպիսկոպոսը, մեռոնա-

կիր քահանան և հոգևորականք զգեստաւորուած, ժողովրդի բազմութեան հետ ս. Մեռոնը եկեղեցական հանդիսով տանում են նոր շինուած եկեղեցին, ուր կատարւում է նախատօնակ այն տօնի՝ շարականների երգասացութեամբ, որի անուան նուիրւում է եկեղեցին, ասւում է երեկոյեան ժամերգութիւնը, յետոյ լինում է հսկումն, կատարելով գիշերային և առաւօտեան ժամերգութիւնն ամբողջապէս։

Օծումն. միւս առաւօտ եպիսկոպոսը և բոլոր հոգևորական դասը ժողովրդի հետ ժողովուելով եկեղեցու արևմտեան դռան մօտ, որ փակուած է լինում այդ միջոցին, կատարում են դռնաբացէքի կարգը, որից յետոյ մտնելով եկեղեցին, քարեայ սեղանն ու եօթն գոգնոցները ձեռներին կատարում են սահմանած կարգը եկեղեցու մէջ տեղը, դէպի հարաւ, դէպի հիւսիս, բեմի վերայ և եպիսկոպոսը սեղանը հաստատում է սիւնի վերայ։

Այնուհետև սարկաւագները ջրով ու գինով լուանում են սեղանը՝ի խորհուրդ Քրիստոսի կողքից բղխած արեան և ջրի, որով սրբեց եկեղեցին — հաւատացեալներին ամեն տեսակ անմաքրութիւնից և եպիսկոպոսը օծում է մէջ տեղի խաչը, որ կոչւում է *զաւթ*, յետոյ օծում է սեղանի միւս խաչերը, խորհրդարանի, բեմի ճակատի, աւազանի, եկեղեցու անկիւնների, սիւների, կամարների, դռան ճակատների վերայ փորագրած խաչերը և վերջը թափօր են կատարում շուրջը։ Այնուհետև ծածկում է ս. սեղանը եօթն գոգնոցներով, դնում է նորա վերայ հինգ վառած աշտանակ և բազմեցնում է ս. Աւետարան, խաչ ու անմիջապէս ս. պատարագ է մատուցանում ինքը եպիսկոպոսը։

Օծումից յետոյ ութն օր շարունակ նաւակատիք են կատարում նոյն եկեղեցում, պատարագ մատուցանելով և կատարելով ս. Խաչի վերացման կարգը, իսկ իններորդ օրը եկեղեցու տօնը, որի անունով օծուել էր։

Դ. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՆՆԵՐԸ— ՆՈՒԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Եկեղեցու պաշտօնեաների զանազան աստիճանների դասակարգութիւնը կոչւում է *նուիրական պետութիւն* կամ *նուիրապետութիւն*։

Եկեղեցու նուիրապետութիւնը հաստատուեցաւ Քրիստոսից, երբ որ երկնքի արքայութեան սերմերը ժողովրդի մէջ ցանելու համար ընտրեց իւր համար տասներկու հոգի իբրև իւր մշտնջենաւոր հետևողներ, որոնք աւետարանը քարոզեցին և եկեղեցի հաստատելով սկսեցին կառավարել նորընծայ հաւատացեալներին և նոցա պէտքերը լրացնել։ Նոքա էին կատարում ամեն պարտականութիւն Աստուածպաշտութեան ժամանակ, բայց երբ հաւատացեալների թիւը մեծացաւ և առաքեալներն այլ ևս չէին հասնում ամենին, նոքա եկեղեցու կառավարութիւնը, այսինքն հաւատացեալներին ծառայելու գործը յանձնեցին առանձին ընտրուած անձերի, ձեռնադրելով եպիսկոպոսներ. այսպէս էլ Հայաստանի նախկին լուսաւորիչներ ս. Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալները հայ եկեղեցու կառավարութեան գործը յանձնեցին իրանց ձեռնադ-

րած եպիսկոպոսներին ու քահանաներին։

Եւ այսպիսով մեր եկեղեցական նուիրապետութիւնը հետևեալ աստիճաններն ու բաժանումն ունեցաւ.

ա. Ընդհանրական հայրապետ.
բ. Արքեպիսկոպոսներ.
գ. Եպիսկոպոսներ և քորեպիսկոպոսներ.
դ. Վարդապետ, ծայրագոյն վարդապետ.
ե. Քահանայ.
զ. Սարկաւագ.
է. Կիսասարկաւագ.
ը. Ջահընկալ.
թ. Երգմնեցուցիչ.
ժ. Դպիր.
ժա. Դռնապան։

Հայրապետ կամ եպիսկոպոսապետ կամ կաթուղիկոս:

Հայրապետը մեր ազգի ծայրագոյն անկախ պետն է և Հայաստանեայց եկեղեցու ընդհանրական պատրիարքը և դէտը, որի գերիշխանութեան ստորադրուում են բոլոր հայ հոգևորականութիւնն և հոգևոր գործերը, օրնա է կառավարում եկեղեցին, ձեռնադրում եպիսկոպոսներ, ս. Էջմիածնի միաբանութեան և իւր այրապետական իշխանութեան ներքոյ եղած թեմերի համար, նա օրհնում է ս. ե-

ռոնը, տալիս է կանոնական թղթեր առաքելական և հայրապետական կանոնների համաձայն, նշանակում է առաջնորդներ վիճակների համար և վարում ազգի կրօնական կրթութեան հոգսը։

Հայոց ազգի կաթուղիկոսը ընտրւում է ամբողջ ազգի կողմից, դորա համար յատկացրած կարգերի համեմատ համազգային ժողովով և օծւում է ս. Էջմիածնում, տասներկու եպիսկոպոսների ձեռքով, որոնք ս. Մեռոնով օծում են նորա գագաթը և ձգում են վերան Հայրապետական քողը, որ ս. Գրիգոր Լուսաւորչից սկսած գործ է դրւում իբրև նշան հայրապետութեան այն խորհրդով, որ ինչպէս իսրայէլեան ազգի ծայրագոյն առաջնորդ Մովսէս մարգարէի երեսը Աստուծոյ հետ խօսելիս լուսաւորուեց և ոչ ոք չէր կարողանում նայել նորա երեսին, այնպէս էլ մեր եկեղեցու ծայրագոյն պետը աստուածային պատգամները տալիս է ազգին։

Մեր ազգում երկու *մասնաւոր կաթողիկոսներ* էլ կան՝ *Սսի* և *Աղթամարի*, որոնք ենթադրւում են Մայր Աթոռ ս. Էջմիածնի ընդհանրական կաթուղիկոսին. կան նաև *երկու պատրիարքներ՝* Երուսաղէմի և Կ. Պոլսի, որոնք միայն արքեպիսկոպոսներ են և նոցա

իշխանութիւնը աւելի չէ քան եպիսկոպոսին

Ս. Էջմիածնի Հայոց կաթուղիկոսը կոչւում է եպիսկոպոսապետ, հայրապետ, ծայրագոյն պատրիարք, կաթուղիկոս ամենայն Հայոց և անկախ է Հռոմէական և Յոյն աթոռներից։

Արքեպիսկոպոս, եպիսկոպոս և քորեպիսկոպոս:

Եպիսկոպոս բառը յունարէն է և նշանակում է տեսուչ. եպիսկոպոսի պաշտօնն է՝ վիճակի առաջնորդ լինել, քահանայ և եկեղեցական ստորին պաշտօնեաներ ձեռնադրել, եկեղեցի և պատկեր օծել, հոգալ իւր թեմի ժողովրդի կրօնական և բարոյական պէտքերը և նոցա կրօնական դաստիարակութեան մասին և առհասարակ կառավարել իւր հօտը, հրսկելով, որ անսխալ և անաղարտ պահպանուին նախնի սուրբ հայրերի տուած պատուէրները, որոնք պարունակւում են հայոց եկեղեցու կանոնագրքի մէջ։

Եպիսկոպոսացուն ընտրւում է մի որև է թեմի ժողովրդի և հոգևորականների հաւանութեամբ և առաջարկւում է կաթողիկոսին ձեռնադրութեան համար, իբրև հովիւ և վարդապետող իրանց թեմի։ Իսկ կաթուղիկոսն ընտրեալին ձեռնադրում է ս. Էջմիածնի Մայր Տաճարում առանձին հանդիսով, տալով նորա ձեռքը հովուական գաւազան և դնելով ճկոյ-

թին եպիսկոպոսական մատանի, ի նշան հովուական իշխանութեան։

Եպիսկոպոս ձեռնադրելու իրաւասութիւնը պատկանում է ս. Էջմիածնի ընդհանրական կաթուղիկոսին, բայց ձեռնադրում են նաև Սսի ու Աղթամարի մասնաւոր կաթուղիկոսները, միայն իրենց վիճակի համար։

Արքեպիսկոպոս կամ եպիսկոպոսը նոյնն է աստիճանով, ինչ որ եպիսկոպոսը, միայն առաջինը աւագութեան տիտղոսն է, իսկ վերջինը վարչական կոչումն է, որովհետև քորեպիսկոպոսները լինում են թեմի մի մասի կառավարիչներ և ենթարկւում են եպիսկոպոսի իշխանութեանն ըստ վարչականին։

Վարդապետ, Ծայրագոյն վարդապետ.

Ձեռնադրութեամբ վարդապետը նոյնն է, ինչ որ քահանան, բայց իշխանութեամբ բարձը է նորանից։ Վարդապետը որոշւում է քահանայից նորանով, որ գլխին վեղար է ծածկում, իբրև կրօնաւորութեան և կուսական կեանքի նշան։ Վարդապետը մեր եկեղեցու մէջ կոչւում է օրէնքի և հաւատի ուսուցիչ և Աստուծոյ բանի քարոզիչ. իսկ Ծայրագոյն վարդապետ կոչւում են այն վարդապետները, որոնք ստացել են վարդապետական Ծայրագոյն աստիճան կամ իշխանութիւն Աստուծոյ խոս-

քը քարոզելու. Ծայրագոյն վարդապետին տըրւում է օձագլուխ գաւազան Մովսիսի գաւազանի օրինակով, որ օձ դարձաւ։

Քահանայ, երէց.

Քահանայ բառը *քաղդէարէն քոհէն* բառից է առաջ եկել, իսկ *երէց* բառը յունարէն է, երկուսն էլ նշանակում են եկեղեցու պաշտօնեայ, որ ձեռնադրուելով և ս. Մեռոնով օծուելով եպիսկոպոսից ընդունում է ս. Հոգւոյ շնորհը, որով դառնում է ժողովրդի հովիւ և եկեղեցու ս. խորհուրդները կատարող։

Քահանայի կարգը եկեղեցու խորհուրդ է որ կատարւում է եկեղեցում ս. պատարագի ժամանակ սեղանի առջև բեմի վերայ և ունի եօթն աստիճան.

Ա. Դռնապանութիւն,
Բ. Դպրութիւն,
Գ. Երգմնեցուցչութիւն,
Դ. Ջահընկալութիւն,
Ե. Կիսասարկաւագութիւն,
Զ. Սարկաւագութիւն և
Է. Քահանայութիւն։

Մեր եկեղեցական կանոններով, երբ մէկը ցանկանում է քահանայ ձեռնադրուիլ, ձեռնադրող եպիսկոպոսի պարտքն է մեծ զգուշութեամբ քննել թէ նուիրեալը մաքուր ամուս-

նութիւնից է ծնուած, մարմնական արատ չունի՞, ունի՞ բաւական գիտութիւն կրօնական ուսմանց, վարք և բարքը համապատասխան են հոգևոր կոչման և ունի՞ վերջապէս հովուական հոգի և ներքին ձգտումն հոգևորական լինելու։

Եւ երբ նուիրեալը ըստ ամենայնի արժանաւոր է նկատւում, այն ժամանակ եպիսկոպոսը հանդիսաւոր կերպով ձեռնադրում է նորան և օծում ս. Մեռոնով Մայր Մաշտոցում սահմանուած կարգով, որից յետոյ տալիս է նորընծայ քահանայի ձեռքը սկիհը և մաղզման Քրիստոսի կենարար Մարմնով և Արիւնով և այդպիսով տալիս է նորան իշխանութիւն ս. պատարագ մատուցանելու կենդանիների և ննջեցեալների համար։

Նորընծայ քահանան ձեռնադրութիւնից յետոյ քառասուն օր առանձնանում է եկեղեցու սենեակում, ուր մաքուր պահեցողութեամբ վարժւում է քահանայական գիտելիքների մէջ, ի յիշատակ Յիսուսի՝ մկրտութիւնից յետ անապատը քաշուելուն, ուր քառասուն օր ծոմ պահեց և աղօթքի անձնատուր լինելով՝ յաղթեց փորձողին և այնուհետև սկսաւ իւր առաքելութեան գործը կատարել. այսպէս էլ նորընծայ քահանան ս. Մեռոնի օծմամբ ստանալով սուրբ հոգու շնորհքը՝ քառասուն օր փակւում է եկեղեցու սենեակում, ինչպէս անապատում և աղօթքով ու պահեցողութեամբ սովորում է յաղթել աշխարհիս փորձութիւններին և ապա մտնում է իւր առաքելական պաշտօնի մէջ։

Սարկաւագ.

Սարկաւագը եկեղեցու պաշտօնեայ է, որի պաշտօնն է սպասաւորել ս. պատարագին, այն է վերաբերել Աւետարանը, Աւետարան կարդալ, հաւատոյ հանգանակն ասել և ս. Խորհուրդը ընծայարանից վերաբերելով պատարագիչ քահանային մատուցանել։ Նաև հին ժամանակ եպիսկոպոսների սպասաւորելն էր իբրև փոխանորդ նորան, ինչպէս օրինակ չորրորդ դարում Խազ սարկաւագը Ներսէս Մեծի կառուցած բազմաթիւ բարեգործական հաստատութիւնների վերատեսչի պաշտօն էր վարում նորա փոխարէն։

Սարկաւագ ձեռնադրում է եպիսկոպոսը ս. պատարագի ժամանակ, ձգելով նորա ձախ ուսին ուրար, որով որոշւում է նա եկեղեցու այլ պաշտօնեաներից։ Ուրարը նշան է Քրիստոսի լուծը կիսով չափ բառնալուն։

Կիսասարկաւագ.

Կիսասարկաւագը սարկաւագի օգնականն

է և նորա պաշտօնն է զգեստաւորել պատարագիչ քահանային, դատարկ սկիհը խորհրդանոցը տանել և ս. պատարագին սպասաւորել։

Կիսասարկաւագ ձեռնադրում է եպիսկոպոսը, որ հագցնելով նորան հոգևորական սքեմը՝ ձգում է նորա ձախ ձեռքին բազկուրար կամ երկճալ ուրարը, որ նշան է թէ նա անզօր է տակաւին Քրիստոսի լուծը ամբողջովին բառնալու, այլ միայն նորա մի մասը. տալիս է ձեռքին դատարկ սկիհն ու մաղզմայն և պատարագի զգեստն ու խորհրդատետրը։

Ջահընկալ.

Ջահընկալը եկեղեցու պաշտօնեայ է, իսկ ջահընկալութիւնը քահանայութեան չորրորդ աստիճանն է, նորա պարտականութիւնն է վառել եկեղեցու ջահերը, ս. պատարագի համար նշխար թխել և բաժակը պատրաստել։

Ջահընկալութեան աստիճանը տալիս է եպիսկոպոսը, հագցնելով նուիրեալին դպրական շապիկ և տալով նորա ձեռքին վառ աշտանակ ու դատարկ բաժակամանը։

Ջահընկալները սովորաբար կոչւում են դպիր։

Երդմնեցուցիչ.

Երդմնեցուցիչը եկեղեցու պաշտօնեայ է, որի պաշտօնն էր հնումը ձեռքը դնել հիւանդների վերայ և երդմնեցնելով դևերը հալածել մարդկանցից։ Այժմ այս աստիճանը առանձին չէ տրւում, այլ միայն ջահընկալութեան հետ։

Երդմնեցուցչութեան աստիճանը տալիս է եպիսկոպոսը, տալով նուիրեալի ձեռքը մաշտոց գիրքը, որի մէջ, ի միջի այլոց, գրուած են և սատանայից հրաժարման երդմունքը մկրտութեան ժամանակ։

Դպիր կամ ընթերցող.

Դպիրը եկեղեցու պաշտօնեայ է, որի պաշտօնն է կարդալ եկեղեցում մարգարէների և առաքեալների թղթերը։

Դպրութեան աստիճանը տալիս է եպիսկոպոսը, նոյնպէս ջահընկալութեան հետ, տալով նուիրեալի ձեռքը ճաշոց գիրքը։

Դռնապան.

Դռնապանը եկեղեցու պաշտօնեայ է, որի պաշտօնն է եկեղեցու դուռը բանալ և փակել. եպիսկոպոսը այս աստիճանը տալիս՝ նուիրեալի ձեռքը դնում է եկեղեցու բանալին և տալիս է նորան իշխանութիւն եկեղեցին բանալու և փակելու, որ աղանդաւորներին, բանադրուածներին ու չըմկրտուածներին չթողնէ եկեղեցի մտնելու։

Ե. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՍՊԱՍՆԵՐՆ ՈՒ ԱՆՕԹՆԵՐԸ։

Աստուածպաշտութեան կարգը կատարելու ժամանակ գործ են դնում հետևեալ անհրաժեշտ սրբազան անօթները.

ա. Սկիհ եւ մաղզմայ:

Սկիհը արծաթեայ կամ ոսկեայ սրբազան բաժակ է, որի մէջ սպասի գինին և հացը պատարագի միջոցով սրբագործւում է և դառնում ընդ տեսակաւ հացի և գինւոյ ճշմարիտ մարմին և արիւն Քրիստոսի։

Սկիհը նշանակում է Յիսուսի չարչարանքի բաժակը և դարձեալ այն բաժակը, որից Յիսուս խորհրդական ընթրիքի ժամանակ հաղորդեց առաքեալներին վերնատանը։ Իսկ մաղզմայն նոյնպէս արծաթեայ կամ ոսկէ բոլորակ ափսէ է կամ սկհու ծածկոց, որի վերայ դրւում է սպասի նշխարը։ Մաղզմայն նշանակում է Փրկչի ծննդեան մսուրը և գերեզմանը, որի մէջ թաղուեցաւ նորա սուրբ մարմինը։

բ. Մասնատուփ:

Արծաթեայ կամ ոսկու փոքրիկ տուփ է, որի մէջ պահւում է սրբ. խորհրդի սրբագործուած մասը հիւանդներին և բանտարկեալներին ճաշակելու համար։

գ. Բաժակաման:

Արծաթեայ մի անօթ է, որի մէջ պատրաստւում է սուրբ խորհրդի գինին, որտեղից ածւում է սկհու մէջ սրբ. պատարագից առաջ։

դ. Խնկանոց կամ բուրվառ:

Հին ժամանակ խունկ ծխելու համար գործ էր ածւում *խնկանոցը*, որ մի փոքր կրակարանի ձև ունէր առանց շղթաների, վրայից ծածկած մի ծակոտկէն խուփ. խնկարկողը ներքևից բռնած ման էր ածում սեղանի ու պատկերների առաջ և խնկի ծուխը ինքն իրան ծխւում էր ամեն տեղ։ Խնկանոց այժմ այլ ևս չէ գործ ածւում։ Բայց կար և *բուրվառ* ասուած գործիքը, որ նոյնպէս խունկ ծխելու ման է շղթաներից կախած և մանր բոժոժներով զարդարած, որով նոյնպէս խնկարկում էին Տէրունական և սրբերի պատկերների առաջ և ժողովրդին։ Այժմ գործ է ածւում բուրվառը այդ միևնոյն ձևով։

Բուրվառը, ինչպէս յայտնի է, գործ էր ածւում և հին ուխտի ժամանակ, որ և վերցրած է այնտեղից։

ե. Ցապանակ կամ խնկաման:

Մի արծաթեայ արկղ է վերևից չորս փոքրիկ խաչերով և մի մոմակալով զարդարած

և գործ է ածւում մէջը խունկ և կնդրուկ պահելու համար։ Տապանակի գործածութիւնը նոյնպէս հին ուխտի եկեղեցուց է վերցրած։

գ. Խաչվառ կամ վառ։

Խաչվառը խաչագլուխ ձողաբարձ դրօշակ է, որի վերայ նկարուած է լինում խաչելութեան և Աստուածածնի պատկերներ, որ եկեղեցական հանդէսների ժամանակ, օրինակ՝ անդաստանի, թափօրի, յուղարկաւորութեան և այլն տանում են առջևից։

Խաչվառի գործածութիւնը եկեղեցում վերցրած է հետևեալ դէպքից.—երբ որ մեծ Կոստանդիանոս կայսրը փոքր զօրքով գնում էր Թշնամեաց դէմ պատերազմ՝ կէսօրի ժամանակ օդի մէջ յանկարծ մի լուսեղէն խաչ տեսաւ, որի վերայ գրած էր «սորանով կը-յաղթես» և Յիսուս տեսիլքի մէջ երևելով Կայսեր հրամայեց ս. խաչի նշանը նկարել տալ բոլոր դրօշակների ու վահանների վերայ. կայսրն անմիջապէս կատարեց այդ և յաղթեց Թշնամուն, կռապաշտութիւնը ոչնչացաւ և ամեն տեղ փայլեց Քրիստոսի սուրբ խաչը։ Քրիստոնեայ եկեղեցիները, 'ի Թիւս որոց և մեր եկեղեցին, դորա յիշատակի համար սկըսաւ խաչվառի գործածութիւնը հանդէսների ժամանակ։

է. Քշոց։

Քշոցը արծաթեայ բոլորակաձև ճօճանակ է եզրներին բոժոժներով զարդարած, իսկ երկու կողմերը քանդակած կամ նկարուած են վեցթևեան սերովբէների պատկերներ և հագցրած է լինում երկայն ձողերի վերայ, որոնցից բռնելով սարկաւագները շարժում են պատարագի ժամանակ սուրբ խորհրդի վերայ 'ի նշան հրեշտակների հովանաւորութեան, սերովբէների սաւառնելու և Սուրբ Հոգու իջման պատարագի նուէրների վերայ։

Քշոցները գործ են ածւում ս. պատարագի հետևեալ միջոցներին.—Սուրբ Աստուածին, ս. խորհրդի վերաբերման, «Քրիստոս 'ի մէջ մեր յայտնեցաւ» ասելիս, Սուրբ Սուրբին, «Հոգի Աստուծոյ», «Հայր մեր» և «միայն սուրբ» ասելիս. բայց գործ են դնում նաև եկեղեցական ուրիշ հանդէսների ժամանակ. օրինակ՝ սրբալոյս միւռոնը և սրբոց մասունքները վերաբերելիս, թափօրին, Խաչվերացի երեկոյին, «Այսօր դասք հրեշտակաց»-ի երկրորդ մասը երգելիս և այլն։

ը. Խաչ։

Խաչը նիւթական ձևը կամ պատկերն է կենարար սուրբ խաչափայտի, որի վերայ մեր

տէր Յիսուսը խաչուեցաւ մարդկային ազգի փրկութեան համար։

Հայկական խաչը պարզ քառաթև ձև ունի, որպիսի էր և Քրիստոսի խաչափայտը։ Խաչի նշանակութիւնը խիստ մեծ է քրիստոնէական եկեղեցու համար. նա աստուածպաշտութեան ժամանակ գործ է ածւում նախ՝ իբրև երկրպագելի պատկեր կամ նիւթ և յիշեցնում է մեզ Քրիստոսի փրկարար տնօրինութիւնը։ Երկրորդ՝ նորանով ենք տեառնագրում և օրհնում եկեղեցու բոլոր խորհուրդները և արարողութիւնները կատարելիս։ Երրորդ՝ վերամբարձ տանում ենք եկեղեցական բոլոր նշանաւոր հանդէսների և թափօրների ժամանակ և վերջապէս խաչը ինչպէս պատուական և և գերագոյն նշան հաւատի, շքոյ և պատուի գործ են դնում եկեղեցիների գըմբէթների և թագերի գլխին և ամեն հաւատացեալ սիրով կախում է իւր կրծքին իբրև ապաւէն ընդդէմ թշնամւոյն։ Խաչը, իբրև երկրպագելի նշան, առաքելական սահմանադրութեամբ օրհնւում է և օծւում սուրբ միւռոնով։

Թ. Միւռոնաշիշ։

Արծաթեայ կամ ոսկէ անօթ է, որ երբեմն աղաւնու նմանութեամբ է շինւում 'ի

նշան ս. Հոգու աղաւնակերպ իջնելուն և նորա մէջ է պահւում եկեղեցում ս. միւռոնը։

ժ. կոնք, դոյլ եւ ղենջակ կամ թաշկինակ։

Պատարագիչ քահանայի ձեռները լուանալու համար եկեղեցում գործ է դրւում կոնք և դոյլ, իսկ ձեռները մաքրելու համար ղենջակ կամ թաշկինակ 'ի նշան մաքրութեան ամեն տեսակ աղտեղութիւնից։

Բացի դոցանից աստուածպաշտութեան ժամանակ գործ են դնում և հետեւեալ օժանդակ սպասները.

ժա. պատկեր։

Եկեղեցին պատկերներ գործածելու սովորութիւնը մտցրել է հին ժամանակից սկըսած, ցանկալով նորադարձ հաւատացեալների սրտերում տպաւորել նոցա առաքինի գործերը։ Հայաստանեայց եկեղեցին ևս ընդունում է պատկերներ գործ ածելու սովորութիւնը և մատուցանում է նոցա պատշաճաւոր յարգանք։ Փրկչական, Աստուածամօր և ուրիշ սրբերի պատկերների գործածութիւնը տեղի ունի առաջին դարերից սկսած, բայց ընդհանրացած է մանաւանդ չորրորդ դարից յետոյ։

Մեր եկեղեցին պատկերների վերաբերութեամբ հետևեալ կարգը ունի սահմանած.

ա. Եկեղեցում դրուելիք պատկերները պէտք է անշուշտ նկարած լինին իւղաներկ կտաւի վերայ։

բ. Թղթէ և ձուլածոյ պատկերների գործածութիւնը միանգամայն մերժում է մեր եկեղեցին։

գ. Պատկերը պէտք է վայելուչ նկարուած լինի, որ յարգանք ազդէ քրիստոնէին և ոչ թէ իւր այլանդակութեամբ ծաղր յարուցանէ նորա մէջ։

դ. Սուրբերի պատկերների վերայ պէտք է անշուշտ սուրբ երրորդութեան մի նշան լինի։

ե. Պէտք է օծուած լինի ս. միւռոնով եպիսկոպոսի օրհնութեամբ, ըստ մայր մաշտոցի Հայաստանեայց եկեղեցւոյ, որպէսզի Սուրբ Հոգին տայ նոցա իրանց նախատիպների շնորհը։

զ. Եկեղեցիներում կարելի է դնել յարգելու բացի Տէրունական և Տիրամօր պատկերներից նաև այն բոլոր ազգային և օտար սուրբերի պատկերները, որոնք տօնւում են մեր եկեղեցում, բայց գերադասելի են մանաւանդ ազգային սրբերի պատկերները։

ժբ. գրակալ։

Գրակալը փայտեայ ծալածոյ մի գործիք

է, որի վերայ դնում են եկեղեցական սուրբ գրքերը աստուածպաշտութեան ժամանակ գործածելու համար։

ժգ. Աշտանակ, կերոն, մոմ, ջահ։

Մոմերի գործադրութիւնը ընդունուած էր հին ուխտի աստուածպաշտութեան ժամանակ թէ վկայութեան խորանում և թէ Սողոմոնի տաճարում ինչպէս լուսաւորութեան նպատակով, նոյնպէս և հանդիսին շուք և պայծառութիւն տալու համար։

Մեր եկեղեցին ևս ընդունած է մոմերի գործածութիւնը, բայց առաջին դարերում քրիստոնեաների հալածանքների ժամանակ մութ այրերը և գետնադամբանները լուսաւորելու համար, ուր առ ահի կատարւում էր աստուածպաշտութիւնը, իսկ ապա այդ սովորութիւնը մնաց, որովհետև աստուածպաշտութեան կարգը առաւօտ և երեկոյ մութ ժամանակ կատարելու համար՝ լուսաւորութեան պէտք կար և միևնոյն ժամանակ եկեղեցական հանդէսներին շքեղութիւն և վեհութիւն տալու նպատակով։ Միւս կողմից վառած մոմեղէնը նշան է մեր վառ և բորբոք սիրոյն դէպի Աստուած։

Մեր եկեղեցում գործ է դրւում մաքուր մեղրամոմ։ Մոմ վառելը սովորական է ամեն

ժամանակի համար, բայց մանաւանդ անհրաժեշտ է համարւում վառել ս. Աւետարանը կարդալիս և եկեղեցական հանդէսների ժամանակ։

Զ. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾԱԾՈՒՈՂ ԶԳԵՍՏՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԴԵՐԸ։

Առաքեալները իւրեանց քարոզութեան ժամանակ և եկեղեցու խորհուրդները կատարելիս տարբեր հանդերձ էին հագնում ժողովրդից որոշուելու համար, որտեղից սովորութիւն եղաւ, որ հոգևորականները աստուածպաշտութեան ժամանակ սկսեցին գործածել առանձին տեսակ զգեստներ։ Այդ զգեստների գործածութիւնը ընդունեց և Հայոց եկեղեցին, որ սահմանեց ամենակերպ պայծառ զգեստներ գործածել եկեղեցում Տիրոջ սպասաւորութիւնը առաւել փառաւոր և շքեղ կացուցանելու համար։

Մեր եկեղեցական զգեստների ձևը գլխաւորապէս վերցրած է Կեսարիայի և Երուսաղէմի եկեղեցիներից, բայց տուած է նոցա առաւել ազգային ձև. այդ զգեստները մինչև հինգերորդ դար ենթարկուեցան մասնաւոր փոփոխութեան ձևի և նիւթի կողմից, իսկ այնուհետև, այն է ս. Մեսրովպ և Սահակ թարգմանիչներից յետոյ մնաց անփոփոխ մինչև մեր օրերը։

Ս. Էջմիածնայ հնութեանց թանգարանում պահուած բազմաթիւ թանկագին զգեստ-

ները, ինչպէս նաև մեր այլ նշանաւոր վանքերում եղածները վկայում են, որ հարիւրաւոր տարիներով առաջ մեր եկեղեցական զգեստներն ու սպասները նոյն ձևն ունէին, ինչ որ այժմ։

ա, Ընդհանուր զգեստներ.

Բոլոր սրբազնագործ հոգևորականների՝ այն է կաթուղիկոսի, եպիսկոպոսի, վարդապետի, քահանայի և սարկաւագի սովորական հանդերձն է կրօնաւորական *սքեմը* (վերարկուն), որով նոքա տարբերւում են աշխարհականներից։

Կուսակրօն հոգևորականները տարբերւում են ամուսնացած հոգևորականներից *վեղարով*, որ առհասարակ անապատականների գլխի ծածկոյթն է, և սրածայր գագաթ ունի կաթուղիկէի նմանութեան։ Յայտնի չէ, թէ ո՞ր ժամանակից է մտել վեղարի գործածութիւնը մեզանում, բայց մեր մատենագիրների մէջ յիշատակւում է *ԺԱ* դարից յետոյ։

Սովորական ժամերգութեան ժամանակ կաթուղիկոսը, եպիսկոպոսը, վարդապետը ու քահանան ձգում են իրանց վերայ *փիլօն*։

Գաւազան. գաւազանը պատուի նշան է կուսակրօն հոգևորականների և երկու տեսակ է լինում.

Երկգլխեան օձազարդ գաւազան, որ իրաւունք ունին գործ դնել արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ և ծայրագոյն վարդապետներ։ Օձագլուխ գաւազանը յիշեցնում է Մովսիսի գաւազանը և այն ձողը, որի վերայ նա բարձրացրեց անապատում օձը, իբրև օրինակ Քրիստոսի խաչին։

Հովուական կամ գնդաձև, որ հովուի ցուպի ձև ունի կոր գլխով և յատուկ է միմիայն կաթուղիկոսին, որ հովուապետն է համարւում համայն ազգի։

Կաթուղիկոսը, իբրև իշխանական նշան կրում է *մատանի* մատանէ մատում, իսկ եպիսկոպոսը ճկոյթ մատին։

Հողաթափ. եկեղեցի մտնելիս բոլոր հոգևորականները ոտին հագնում են հողաթափ, իսկ բեմը ելնելիս հողաթափ հագնելը պարտաւորական է ամեն հոգևորականի համար իբրև լրումն տէրունական առակին, որ երբ անառակ որդին մեղայով դարձաւ իւր հօրը, սա գթալով հրամայեց ծառաներին հագցնել նորա ոտներին կօշիկ. այլ և այն պատուէրի, որ տուեց Յիսուս առաքեալներին կոխել օձերը, կարիճները և թշնամու բոլոր զօրութիւնը։

Հողաթափը պատուոյ մի ցոյց է դէպի Աստուծոյ տունը. իսկ պատարագին «մի ոք

յերեխայից» ասելիս քահանան հանում է հողաթափները ի յիշատակ հին ուխտի ժամանակ Աստուծոյ ասած խօսքին թէ «լոյծ զհողաթափս ոտից քոց, զի տեղիդ յորում դուդ կաս, սուրբ է»։

բ, Սարկաւագի, կիսասարկաւագի եւ դպիրների զգեստներ.

Սարկաւագը եկեղեցում հագնում է *շապիկ* և ձախ ուսին ձգում է *ուրար*։ Կիսասարկաւագը նոյնպէս շապիկ է հագնում և ուրարի փոխանակ կրում է ձախ բազկին *բազկուրար*։ Իսկ դպիրները միմիայն շապիկ են հագնում։

Շապիկը նշան է սրբութեան և անարատութեան։

Ուրարը հրեշտակի թեւերն է նշանակում, որովհետև սարկաւագը կատարում է հրեշտակի պաշտօնը։ Սարկաւագի ձախ ուսին ուրար ձգելը նշանակում է, որ նա Յիսուսի լուծը կիսով չափ է բառնում և դեռ կարողութիւն չունի ամբողջապէս կրելու։

Բազկուրարը նշանակում է, որ կիսասարկաւագը դեռ ամենևին չի կարող այդ լուծը վերցնել իւր վերայ։

գ, Քահանայի զգեստներ.

Սուրբ պատարագի ժամանակ եկեղեցում քահանան գործ է դնում հետևեալ զգեստները.

Սաղաւարտ. սաղաւարտը փոխարինում է Ա.Հարօնեան խոյրին և դիպակից կամ կերպասից ասղնէգործած կամ մարգարտազարդ և արծաթապատ գլխանոց է գագաթին մի փոքրիկ խաչ ամրացրած, որի չորս կողմերը նկարուած են Քրիստոսի տնօրէնութեան չորս գլխաւոր դէպքերը։ Սաղաւարտի գործածութիւնը հին ուխտի եկեղեցուց է առնուած և նշանակում է Փրկչի կրած փուշ պսակն ու վարշամակը և գործ է դրւում որպէս զրահ թշնամու զօրութեան դէմ պատերազմելու։

Շապիկ. շապիկը Ա.Հարօնի պատմուճանի օրինակն ունի. շապիկը պէտք է լինի սպիտակ և նշանակում է հրեշտակի սպիտակ հանդերձը, որ նստած էր Յիսուսի գերեզմանի վերայ և այն հանդերձը, որ Հերովդէսը ծածկեց Յիսուսի վերայ. իսկ սպիտակութիւնը նշանակում է մեր Փրկչի անախտ ծնունդն և անարատ կեանքը։

Փորուրար. առջևից կախ է ձգւում պարանոցի վերայ և ծածկում է կուրծքը մինչև վայր. փորուրարը նշանակում է այն ծանր

լուծը, որ քահանան ամբողջապէս առնում է իւր ուսերի վերայ և նշանակ է խոնարհութեան, հեզութեան և արդարութեան, որով պէտք է քահանայն զարդարէ իւր սիրտը։ Միևնոյն ժամանակ նշանակում է Յիսուսի հնազանդութիւնը և համբերութիւնը իւր կենսագործ տնօրէնութիւնները կատարելու։

Գոտի. գոտին գործ էր դնւում և հին ուխտի եկեղեցում. դա մի լայն ժապաւէն էր, որ առջևից ունէր մէջ տեղը արծաթի կամ ոսկէ ակնազարդ և մարգարտապատ գլուխ իբրև կապ. նոյն ձևն ունի և այժմ մեզանում և նշան է արիութեան և հոգևորական քաջութեան քահանայական պաշտօնը կատարելու. միևնոյն ժամանակ նշանակում է Յիսուսի ողջախոհութիւնը և նորա Աստուածութեան անբաժանելի միաւորութիւնը մարդկութեան հետ։

Թաշկինակ. գոտու հետ քահանան կրում է և թաշկինակ, ինչպէս որ Փրկիչը սփածաւ ղենջակ և լուաց աշակերտների ոտները ու ղենջակով սրբեց. բայց իսկապէս գործնական պիտանութիւն ունի ձեռները մաքրելու համար։

Բազպաններ. քահանայի շապկի թեղանները պատած են լինում բազուկների վերայ թևնոցներով, որոնք կոչւում են բազպան

և նշանակում են Յիսուսի ձեռքի կապանքները և նշան են բազուկների զօրութեան թշնամու դէմ պատերազմելու, նաև նշանակում է մեր Փրկչի սրտի յօժարութիւնն ու պատրաստութիւնը երկնաւոր հօր հաճութիւնը կատարելու։

Վակաս. քահանայի ուսանոցն է, որ կիսաբոլորակ ձևով պատում է քահանայի պարանոցը թիկունքի կողմից և սովորաբար ձուլած կամ ասղնէգործած է լինում ոսկէհուռն անկուածով, վրան տասներկու առաքեալների և մէջ տեղը Յիսուսի պատկերները։ Վակասը Ա.Հարոնի վակասին է փոխարինում և նշան է մոլորեալ ոչխարին, որ Յիսուս ուսի վերայ դրեց, այն է մոլորեալ մարդկութեան. միևնոյն ժամանակ վակասը արդարութեան նշանակն է և մտաբերել է տալիս հաւատացեալներին մեր Փրկչի խոստացած քաղցր լուծը և թեթև բեռը։

Շուրջառ կամ նափորտ. շուրջառը փիլոնաձև երկայն և անթև վերարկու է, որ գործ է ածւում ս. պատարագի, սրբազան խորհուրդների կատարման, նախատօնակին, թափորի ժամանակ և աւետարանը կարդալիս։ Շուրջառը որպէս հոգևոր զրահ նշանակում է Յիսուսի անկար քղամիդը և այն ծիրանին, որ

չարչարանքի օրը ձգեցին նորա վերայ։ Նաև նշանակում է շնորհների լիութիւնը և լրումը ամենայն առաքինութեանց, որով զարդարուած էր Յիսուսի մարդկութիւնը։

դ, Եպիսկոպոսական զգեստներ.

Եպիսկոպոսը, բացի քահանայական զգեստներից, կրում է նաև՝ փոխանակ սաղաւարտի՝ խոյր կամ թագ, արտախուրակներ, եմիփորոն և գաւազան։

Թագը կամ *խոյրը* երկփեղկեան գլխարկ է ականակուռ և գոհարազարդ. դա վերցրած է հին ուխտի եկեղեցուց և նշանակում է հին և նոր կտակարանների գիտութիւնը և այն իմաստութիւնը, որ պիտի ունենայ եպիսկոպոսը։

Արտախուրակները թագի ետևից կախուած կէս կանգուն երկայնութեան զարդեր են, որոնց գործածութիւնը վերցրած է հրէից քահանայապետների ապարօշի ձևից, որով նոքա պատում էին թագի ստորին կողմը, իսկ երկու ծայրերը արձակ կախ էին ընկած ուսերի վերայ։

Եմիփորոն. դա լայն և հինգ խաչով զարդարուած ուրար է, որ եպիսկոպոսը կրում է շուրջառի վերայ և ուսերի վերայից

տարածւում է կրծքի և մէջքի վերայ մինչև ոտները։ Ինչպէս երևում է ամենահին նկարներից եմիփորոնի գործածութիւնը մնացած է առաքեալներից։ Եմիփորոնը գործ է ածւում ամբողջ զգեստաւորութեան ժամանակ։

ե, Հայրապետական զգեստներ։

Կաթուղիկոսը բացի եպիսկոպոսական բոլոր զգեստներից գործ է գնում նաև *կոնքեռն*, որ մի քառանկիւնի (խաչաձև) զարդ է, մի ծայրից գօտկից կախած որպէս հովուական հոգևոր զէնք և Յիսուսի զենչակի նշանակութիւնը ունի։ Կոնքեռն երբեմն տրւում է և պատուաւոր արքեպիսկոպոսներին և պատրիաքներին իբրև նշան գերագոյն յարգանաց։

Արծուէգորգ. արծիւը իբրև բարձրաթռիչ և սրատես՝ եկեղեցին փոխաբերաբար մաքուր և ուղիղ վարդապետութեան նշան է համարում, իսկ արծուէգորգի գործածութիւնը ցոյց է տալիս, որ քահանայապետը իւր կոչման և կեանքի մէջ պէտք է նմանի արծուին։

Է. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ Ս. ԳՐՔԵՐԸ։

Աստուածպաշտութիւնը և եկեղեցական սրբազան խորհուրդները կատարելու համար գործ են դրուում հետևեալ գրքերը.

ա. ս. Աւետարան.
բ. ժամագիրք
գ. շարական
դ. ճաշոց գիրք
ե. խորհրդատետր
զ. տաղարան
է. տօնացոյց
ը. մաշտոց
թ. կանոնագիրք
ժ. յայսմաւուրք։

ա, Ս. Աւետարան.

Ս. Աւետարանը բովանդակում է իւր մէջ մեր Տէր Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքը-նորա տնօրէնութիւնները, որ գրեցինչորս աւետարանիչները՝ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս և Յովհաննէս։ Աւետարանի և առհասարակ ամբողջ Աստուածաշնչի հայերէն թարգմանութիւնը եղաւ հինգերորդ դարում ս. Սահակ և Մեսրովպ թարգմանիչների և նոցա աշա-

կերտների ձեռքով և կոչւում է բոլոր լեզուների թարգմանութեանց թագուհի։

բ, ժամագիրք,—Հասարակաց կարգ աղօթից.

Ժամագիրքը օրուան ժամերի վերայ բաժանուած գիրք է, որ պարունակում է իւր մէջ հասարակաց աստուածպաշտութեան կարգը կամ այն աղօթքները, երգերն ու ընթերցուածները, որոնցով ամեն օր հաւատացեալները ժողովուելով տաճարը հրապարակով պաշտօն են մատուցանում Աստծուն։ Ժամագիրքը գրել են մեր ս. Սահակ և ս. Մեսրովպ թարգմանիչները և կարգաւորել են Գիւտ, Յոհան Մանդակունի և Ներսէս Շնորհալի սուրբ հայրապետները։

Հայաստանեայց եկեղեցին սահմանած ունի օրական ինն անգամ հասարակաց աղօթք, ինն դաս հրեշտակների օրինակով, որոնք անդադար փառաբանում են Աստծուն. մենք ևս երկնային հրեշտակներին նմանելով՝ աղօթում ենք օրէնը ինն անգամ, ուստի և ժամագիրքը բաժանուած է ինն մասն, այն է.

ա. Գիշեր-ժամու.
բ. Առաւօտեան.
գ. Արևագալի.

դ. Երրորդ ժամու կամ առաջին ողորմեա.
ե. Վեցերորդ ժամու—երկրորդ ողորմեա.
զ. Իններորդ ժամու—երրորդ ողորմեա.
է. Երեկոյեան.
ը. Խաղաղական.
թ. Հանգստեան.

Հին ժամանակ աստուածպաշտութեան ինն կարգը կատարուում էր առանձին առանձին որոշուած ժամերին, իսկ վերջին դարերում մի-միայն օրը երկու անգամ, առաջին վեցը առաւոտեան, իսկ վերջին երեքը երեկոյեան։ Սակայն վանքերում հնաւանդ ձևով է շարունակուում։

Իսկ պատարագի օրերին երեք ողորմեան կատարուում է ճաշին ս. պատարագի հետ միասին։

Ընդհանուր գիտելիք.

Ժամերգութեան ժամանակ եկեղեցու պաշտօնեաներից իւրաքանչիւրը իւր դերն ունի և ասելիքը. այսպէս.—

Աւագ երէցը ժամ է օրհնում և ասում է բոլոր մաղթանքները—դասում։

Քահանաները ասում են աղօթքներ և կարդում աւետարան—ատեան։

Սարկաւագը ասում է քարոզներ-ատեան։

Դպիրները ասում են փոխ—ատեան։

Ամբողջ խումբը դասէ դաս երգում են շարականները ու երգերը։

Պատարագի ժամանակ *ժամարար* քահանան պատարագ է մատուցանում բեմի վերայ սեղանի առաջ։

Սարկաւագը վերաբերում է աւետարանը և ընծաները բեմի վերայ։

Միւս *սարկաւագները* և *կիսասարկաւագը* սպասաւորում են սեղանին բեմի աջ և ձախ կողմերում։

Դպիրներն և *երգեցիկ խումբը* երգում են-ատեան։

Գիշեր ժամու աղօթք.

(Գլխաւոր մասերի մեկնութիւնը)

Մեր եկեղեցին ինչպէս հասարակաց Աստուածպաշտութիւնը, այսպէս էլ բոլոր խորհուրդներն ու ծէսերը սահմանած է սկսել և վերջացնել Տէրունական աղօթքով կամ Հայրմեր-ով, որ հիմն է և բովանդակութիւն ամեն աղօթքի և որից բղխում են ամեն տեսակ խնդրուածներ։

Գիշեր ժամու աղօթքը ուղղում ենք Հօր Աստծուն և նախամարդու պատուիրանազան-

ցութեան խորհուրդն ունի, որով նախամարդիկ մերկացան շնորհներից և այնուհետև փակուեցան նոցա բերանները Աստծուն օրհնաբանելուց, ուստի և մենք մէջ գիշերին խոստովանելով մեր մեղքերը՝ համարձակութիւն ենք խնդրում Հոր Աստծուց բանալու մեր բերանը և աղօթելու, այս խօսքերով «*Տէր եթէ զշրթունս իմ՝ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո*»։

Այդ ժամերգութիւնը մենք կատարում ենք գիշերը դարձեալ այն պատճառով, որ Քրիստոս գիշերը յարութիւն առաւ և գիշերով պէտք է լինի մեռեալների յարութիւնը։

«Զարթուցեալքս» քարոզը և «զքէն գոհանամք» աղօթքը ասել է մեր սուրբ հայրապետ Յովհան Մանդակունին։

Օրհնութիւն կամ *հոգևոր երգ* գիշերային ժամուն երգում ենք այն խորհրդով, որ ինչպէս Մովսէս մարգարէն Իսրայէլեան ազգը ազատելով Փարաւոնի ծառայութիւնից և անապատը հանելով՝ Աստծուն օրհնութեան երգ երգեց, այսպէս էլ հաւատացեալ ժողովուրդը Յիսուսի միջոցով ազատուելով անմարմին Փարաւոնից կամ խաւարի իշխանութիւնից՝ երգում է նոյնանման օրհնութիւններ և երգեր, որոնք խորհրդաբար նկարագրում են

մարդկային ընկած բնութեան ազատութիւնը։

«Վասն»-ով սկսուող չորս քարոզները և նոյնքան աղօթքները ասել է մեր սուրբ Սահակ Պարթև հայրապետը. դոցանով մենք աղօթում ենք աշխարհի և մեր անձերի խաղաղութեան և ամենայն քրիստոնեաների պահպանութեան համար։

Դոցանից յետոյ երգում ենք Տէրունական տօներին «ալէլուեա» երգը, (ալէլուեա հրէից բառ է և նշանակում է «Տիրոջ օրհնեցէք») որ ցնծութեան և օրհնութեան նշան է և շնորհակալութիւն ենք մատուցանում Տիրոջ, որ կրկին արժանացել ենք մեր կորցրած փառքին։

Իսկ պահոց և Մարտիրոսաց տօներին դոքա փոխարէն երգում ենք «*Թագաւոր յաւիտեան*» երգերը, որոնցով աղօթում ենք, միջնորդ ձգելով դէպի Հայր Աստուած տօնուող սրբերին, որոնք Քրիստոսի չարչարանքը իւրեանց անձերի մէջ կրեցին։

Գործնական վարժութիւն։

Հ ա ս ա ր ա կ օ ր ո ւ ա յ.

Աւ. երէց.—*Հայր մեր.*
Տէր եթէ զշրթունս.
Օրհնեալ համագոյ.

Սարկ.— Տէր զի բաղում.
Զարթուցեալքս.
Քահ.— Զքէն գոհանամք.
Աւ. երէց.—Օրհնեալ տէր մեր.
Դասէղաս. – Օրհնութիւն շարական-պահոց կամ մարտիրոսաց ձայնից.
Աւ. երէց.—Մաղթանք ձայնից։
Սարկ.— Զորս քարոզներ ձայնից.
Քահ.— Զորս աղօթքներ ձայնից.
Դասէղաս.—Թագաւոր յաւիտեան.
Աւ. երէց.—Զորս աղօթքների մաղթանք ձայնից.
Հայր մեր.

Կիւրակի օրուայ.

Աւ. երէց.—Հայր մեր.
Տէր եթէ զշրթունս
Օրհնեալ համագոյ.
Ատեան խմբովին | Տէր զի բաղում-ձայնիւ
Դասէղաս.—Փառք հօր.
Ցիշեսցուք.
Զարթիք.
Սարկ. եւ Դպիրներ Ատեան | Զարթուցեալքս.

Դասէղաս.—Առաւօտ լուսոյ.
(Մարտ. տօնին՝ Աշխարհ ամենայն)
Քահ.— Զքէն գոհանամք.
Աւ. երէց.—Օրհնեալ տէր մեր.
Դասէղաս.—Հանգստեան շար.
Սաղմոս.
Քահ.— Աւետարան տաճարի | ձայնից
Դասէղաս.—Աստուածանեղ.
Երգ օրուան պատշաճի.
Աւ. երէց.—Հոգւոց.
Սարկ.— Եւ ևս խաղ. վասն հանգուցեալ
Քահ.— Քրիստոս որդի.
Աւ. երէց.—Հայր մեր.
Սարկ.— Եւ ևս խաղ.
Աւ. երէց.—Օրհնութիւն և փառք.
Դասէղաս.—Օրհնութիւն շարական Յարութեան ձայնից.
Աւ. երէց.—Մաղթանք. փառք հրաշափառ.
Սարկ. և դպիրները ատեան, ձայնով | Զորս քարոզ-ձայնից.
Քահ.— Զորս աղօթք-ձայնից.
Դասէղաս.—Ալէլուեա-ձայնից.
Աւ. երէց.—Մաղթանք ձայնից.
Հայր մեր.

Դասակարգմամբ

Մեծ պահքի.

Նոյն կարգն է կատարւում հետևեալ տարբերութեամբ և փոփոխութիւններով.—

ա. Բոլոր քարոզները ասւում են թիւ։

բ. Նոյնպէս և «Տէր զի բազում»ը։

գ. Պաշտաման կարգը այսպէս է փոխւում.—

Օրհնեալ տէր մեր.
Այսօր անճառ—հերթով.
Սաղմոս—նշանեցաւ.
Աւետարան՝ խաչելութեան—ձայնից.
Նորոգող—ձայնից.
Երգ՝ զարհուրեցան.
Հոգւոց և հայր մեր.

դ. Օրհնութիւն շարականը—յատուկ.

ե. Մաղթանքներն ու ալէլուեան՝ խաչի։

Ծան. Մի քանի տերունական նշանաւոր տօներին օրհնութեան շարականից առաջ ասւում է հետևակ շարական՝ պատշաճի։

Ա ռ ա ւ օ տ ե ա ն.

(Գլխաւոր մասերի մեկնութիւնը)։

Առաւօտեան աղօթքը ուղղում ենք Աստուածորդուն և Յիսուսի Յարութեան խորհուրդն ունի, որովհետև այդ ժամին երևեցաւ նա իւղաբեր կանանց և լցրեց նոցա խընդութեամբ, ուստի և մենք առաւօտեան աղօթքի սկզբում իբրև նշան ուրախութեան ասում ենք հետևեալ սաղմոսը. «Լցաք առաւօտու ողորմութեամբ քով, ցնծացաք և ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց»։

Յետոյ ասում ենք *Հարց* կոչուած շարականը, կամ երից մանկանց երգը։ Հարցի խորհուրդն այս է. ինչպէս որ մանուկներին Նաբուգոդոնոսոր արքայի պատկերին երկրպագութիւն չտալուն համար ձգեցին հնոցի մէջ և բանն Աստուած իջնելով այնտեղ փրկեց նոցա այրուելուց, այսպէս էլ մենք ամեն առաւօտ *Հարց* շարականը երգելով հայցում ենք Տիրոջից, որ փրկէ մեզ մեղքի կրակից. Հարցը միևնոյն ժամանակ Ադամի ազատութեան խորհուրդն ունի։

Մեծացուցէ շարականը Յիսուսի ծննդեան, իսկ իւղաբերից Աւետարանը Նորա թաղման և յարութեան խորհուրդն ունի։

Իւղաբերից աւետարանը խորանից դուրս բերելը Յիսուսի գերեզմանն է նշանակում, վառած երկու մոմերը՝ երկու հրեշտակները, իսկ խունկը իւղաբեր կանանց անուշահոտութիւնը, որ յարութիւնից յետոյ տարածուեցաւ ամեն կողմ աւետարանի քարոզութեամբ։

Փառք ի բարձունս երգը երգում ենք ի խորհուրդ մարդոց ազգակցութեան հրեշտակաց հետ։

Ասասցուք քարոզով աղօթում ենք աշխարհի, Հայոց Հայրապետի, բոլոր հոգևոր ուխտի, թագաւորների և նոցա զօրքի, գերեալների, ճանապարհորդների և նաւորդների, օդի բարեխառնութեան, պտուղների առատութեան, հիւանդների և ամեն վշտացածների, անօրէնների ձեռքը ընկածների, մեռածների և կենդանիների փրկութեան համար։

Սուրբ Աստուածը, - որ ասում է նաև երեքսրբեան երգ, երգում ենք նոյնպէս, 'ի դէմս Որդւոյն Աստուծոյ ի նշան մեր երախտագիտութեան դէպի նա և երեք անգամ ասելուց յետոյ վերջը միջնորդ ենք ձգում նորա մօտ սուրբ Աստուածածնին, ասելով «Փառաւորեալ» երգը, որ ասել է Թովմաս առաքեալը։ Սուրբ Աստուած երգը, ըստ աւանդութեան, երգել է Յովսէփ Արեմաթացին, երբ Քրիստոսի մարմինը իջեցնելով խաչից դրաւ նոր գերեզմանի մէջ և երգեց «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ»։

Հայաստանեայց եկեղեցին նոյն հնաւանդ

ձևով երգում է մինչև այժմ, տէրունական տօներին յարմար փոփոխելով *որ խաչեցար* բառերը։

Արարչական երգը գրել է մեր նշանաւոր հայրապետ ս. Ներսէս Շնորհալին ԺԲ դարում և Աստուծոյ վեցօրեայ արարչագործութեան պատմութիւնն է ներկայացնում, որով մենք յիշում ենք նորա ամենակարողութիւնը։

Գործնական վարժութիւն.

Հասարակ օրուայ։

Աւ. երէց.—Հայր մեր.
Լցաք առաւօտու.
Սարկ.— Ուրախ եղաք.
Աւ. երէց.—Փառք հօր.
Սարկ.— Այժմ և միշտ.—և ևս խաղ.
Աւ. երէց.—Օրհնութիւն և փառք.
Դպիրներ.—Օրհնեալ ես տէր.
Աւ. երէց.—Օրհնեցէք ամենայն գործք.
Դասէղաս.—Հարց շարական ըստ պատշաճի.
Սարկ.— Եկեալքս.
Աւ. երէց.—Ցօղեա՛ տէր զցօղ. (Ցարութեան Հզօր յաղթող)
Դպիրներ.—Մեծացուսցէ-փոխ.

Դասէղաս.—Մեծասցուցէ. շարակ. ըստ պատշաճի.
Սարկ.— Սուրբ զԱստուածածինն.
Քահ.— Ընկալ տէր.
Դպիրներ.—Ողորմեա—փոխ.
Դասէղաս.—Ողորմեա շարական ըստ պատշաճի.
Սարկ.— Երկրպագեմք.
Աւ. երէց.—Բարեխօսութեամբ (յարութեան՝ ողորմած գթած).
Դպիրներ.—Օրհնեցէք—փոխ.
Դասէղաս.—Շարական. տէր երկնից.
Դասէղաս.—Փառք ի բարձունս (կիւրակի և տէրունական տօներին՝ ատեան)։
Աւ. երէց.—Փառք պատիւ.
Դասէղաս.—Առաւօտու երգ—ձայնից ըստ պատշաճի։
Սարկ.— Փառաւորեսցուք — պահոց օրերին, զճգնութիւն—մարտիրոսաց, առաջնորդք—հայրապետաց, մայր սուրբ—Աստուածածնի, Ասասցուք—կիրակիները։
Քահ.— Գոհանամք.
Դասէղաս.—Սուրբ Աստուած—3 անգամ ըստ պատշաճի.
Փառաւորեալ։
Աւ. երէց.—Փրկել զմեզ.
Սարկ.— Եւ ևս խաղ. Վասն լսելի.

Աւ. երէց.—Օրհնութիւն և փառք.
Դպիրներ.—Օրհնեցէք մանկունք—փոխ.
Դասէղաս.—Մանկունք շար. ըստ պատշաճի և ձայնից.
Սարկ.— Վասն խաղաղութեան.
Քահ. – Սուրբ ես տէր.
Դպիրներ.—Բանից իմոց—պահոց. սիրեցի—մարտիրոսաց.
Դասէղաս.—Արարչական-պատշաճի.
Աւ. երէց.—Քրիստոս Աստուած մեր—սրբոց.
Սարկ.— Սուրբ Ճգնաւորք.
Քահ.— Պսակիչ կամ Որ ընտրեցեր.
Աւ. երէց.—Խաչ քո եղիցի—պահոց.
Սարկ.— Աղաչեսցուք.
Քահ.— Օգնեա մեզ.
Սարկ.— Ցիշեա տէր զպաշտօնեայս քո.
Քահ.— Բարերար և բազումողորմ.
Աւ. երէց.—Հայր մեր։

Կիւրակի օրուայ։

Մինչև մեծացուսցէ նոյնն է, մեծասցուսցէ շարականից յետոյ՝

Սարկ. եւ դպ.—Վասն սուրբ տեղւոյս—ձայնով ատեան.
Քահ.— Դու ես թագաւոր.

Դասէղաս.—Եղիցի—ձայնով.

» Արի տէր, Արի և մի՛ մերժեր. Թագաւորեսցէ. Օրթի.

Քահ.— Աւետարան իւղաբերից. ձայնից.

Դասէղաս.—Փառք յարութեան.

Սարկ.— Զուարճացեալքս.

Քահ.— Ամենակեցոյց.

Յետոյ Ողորմեա շարականը և նոյն կարգով շարունակւում է մինչև «օրհնեցէք մանկունք», որի փոխարէն՝

Դասէղաս.—Եղիցի անուն տեառն օրհնեալ.

Քահ.— Աւետարան բժշկութեան—ձայնից.

Դասէղաս.—Նորաստեղծեալ. ձայնով.

Սարկ.— Խնդրեսցուք.

Դասէղաս.—Կեցո՛, տէր ողորմեա.

Քահ.— Քում ամենազօր.

Աւ. երէց.—Հայր մեր։

Մեծի պահքի.

Մեծի պահքին բոլոր քարոզներն ասւում են թիւ. նոյն կարգն է կատարւում ինչ որ հասարակ օրը մինչև մանկանց շարականը. յետոյ՝

Քահ.— Վասն խաղաղութեան.

Քահ.— Սուրբ ես տէր.

2. *քահ.*— Տէր ամենակալ.

Քահ.— Եկեալքս ի խոստովանութիւն.

» Տէր Աստուած փրկութեան մերոյ.

Դպիրներ.—Բանից իմոց.

Դասէղաս.—Արարչական.

Աւ. երէց.—Խաչ քո եղիցի և այլն մինչև վերջ։

Արեւագալի կամ առաջին ժամու աղօթք.

(Գլխաւոր մասերի մեկնութիւնը)։

Արեւագալի աղօթքը ուղղում ենք սուրբ Հոգւոյն և կոչւում է «առաջի ժամու», որովհետև կատարւում է ասիական առաջին ժամին, այն է մեր 6 ժամին։

Արեւագալի ենք անուանում աստուածպաշտութեան այդ կարգը, որովհետեւ այդ ժամերգութեանը երգուող բոլոր երգերով, քարոզներով և աղօթքներով խնդրում ենք սուրբ Հոգւոյն, որ զգալի արեգակի ծագելու հետ լուսաւորէ մեր հոգին իմանալի արեգակի, այն է Քրիստոսի լուսով. արեգակը մեր Փրկչի նըմանութիւն ունի, որ ծագելով արեւելքում՝ լուսաւորեց մարդկութիւնը։

Իսկ առաջին ժամին կատարելը Յիսուսի յարութեան խորհուրդն ունի, որովհետեւ Յիսուս այդ ժամին երեւեցաւ աշակերտներին

իւր յարութիւնից յետոյ. առաջին ժամին կատարուիլը յիշեցնում է մեզ նաեւ միւսանգամ գալուստն և մարդկանց յարութիւնը։

Գործնական վարժութիւն։

Աւ. երէց.—Հայր մեր.
Եղեցի անուն տեառն օրհնեալ.
Սարկ.— Ի նա օրհնեսցին.
Աւ. երէց.—Փառք Հօր.
Սարկ.— Այժմ և միշտ.—և ևս խաղաղութեան.
Աւ. երէց.—Օրհնութիւն և փառք.
Դասէղաս.—Յարևելից—երգ.
Սարկ.— Յարևելից մինչև 'ի մուտս.
Քահ.— Յարևելից—աղօթք.
Դպիրներ.—Աղաղակեցէք—փոխ.
Դասէղաս.—Ճգնաւորք—երգ.
Աւ. երէց.—Աղաչեմք ողորմեաց.
Սարկ.— Սուրբ Ճգնաւորք.
Քահ.— Սուրբ ես տէր.
Դպիրներ.—Աստուած Աստուած իմ—փոխ.
Դասէղաս.—Լոյս արարիչ լուսոյ—երգ.
Աւ. երէց.—Լուսովդ քով Քրիստոս.
Սարկ.— Փառաւորեսցուք.
Քահ.— Զառաւօտու աղօթս.
Դպիրներ.—Տէր հովուեսցէ—փոխ.

Դասէղաս.—Ճանապարհ և ճշմարտութիւն.
Աւ. երէց.—Տէր ուղղեա.
Սարկ.— Աղաչեսցուք.
Քահ.— Օրհնեալ ես տէր.
Աւ. երէց.—Հայր մեր։

Երրորդ ժամու աղօթք—ա. ողորմեա.

(Գլխաւոր մասերի մեկնութիւնը)։

Երրորդ ժամու աղօթքը ուղղում ենք սուրբ Հոգւոյն, որովհետեւ Պենտէկոստէի օրերը լրանալուն պէս՝ ս. Հոգին այդ ժամին իջաւ վերնատանը առաքելոց վերայ. բացի դորանից աւանդութեամբ գիտենք, որ Տէրը այդ ժամին ստեղծեց Ադամին և Հոգւոյ շնորհքը պարգեւեց նորան, այդ ժամին նախամայր Եւան խաբուեցաւ և Հոգւոյ շնորհքից զրկուեց—և այդ ժամին Տէրը խաչին բեւեռուեց և աւազակին դրախտը տարաւ. այդ է պատճառը, որ սուրբ Հոգին ևս այդ ժամին պարգեւեց մեզ, որ իւր իջմամբ բազմապատիկ շնորհքներով զարդարեց առաքեալներին և նոցանով մեզ հաւատացեալներիս, ուստի և երրորդ ժամին աղօթում ենք առ սուրբ Հոգին Աստուած։

Երեք ողորմեաներին մեծի պահոց օրե-

ին աւելանում են և մեծ քարոզներն ու աղօթքները, որ ասել է սուրբ Յովհան Մանդակունին։

Իսկ Ցիշեա տէր զպաշտօնեայս քո քարոզն ասել է Յովհաննէս սարկաւագ վարդապետը 12-րդ դարում։

Գործնական վարժութիւն.

Աւ. երէց.—Հայր մեր.
Օրհնեալ հոգիդ.
Սարկ.— Ողորմեա-փոխ.
Դասէղաս.—Օրհնեմք զքեզ.
Աւ. երէց.—Յամենայն ժամու.
Սարկ.— Եւ ևս խաղաղութեան.
Աւ. երէց.—Օրհնութիւն և փառք.
Սարկ.— Խնդրեսցուք.
Քահ.— Առաջնորդեա.
Սարկ.— Ցիշեա տէր.
Քահ.— Բարերար և բազումողորմ.
Դպիրներ.—Տէր հովուեսցէ.
Սարկ.— Գոհաբանելով.
Քահ.— Խաղաղութեամբ.
Աւ. երէց.—Հայր մեր.

Մեծի պահոց.

Օրհնութիւն և փառք-ից յետոյ՝
Սարկ.— Միաբան ամենեքեան.
Քահ.— Որ ի բրովբէական.
Դպիրներ.—Աստուած օրհնեալ.
Սարկ.— Խնդրեսցուք.
և այլն ըստ կարգին.

Վեցերորդ ժամու աղօթք—ք. ողորմեա.

(Գլխաւոր մասերի մեկնութիւն)։

Վեցերորդ ժամու աղօթքը ուղղում ենք Հօր Աստծուն, որից խնդրում ենք օգնականութիւն մարդկային տկար բնութեան՝ սատանայի դէմ պատերազմելու։ Միևնոյն ժամանակ վեցերորդ ժամու աղօթքը կատարում է և ի դէմս Որդւոյն Աստուծոյ, 'ի խորհուրդ նախաստեղծի պատուիրանազանցութեան և որովհետև այդ իսկ ժամին Յիսուս ճաշակեց քացախը լեղու հետ խառնած։

Գործնական վարժութիւն.

Աւ. երէց.—Հայր մեր.
Օրհնեալ հայր սուրբ.
2 քահ.— Ողորմեա-ատեան.

Աւ. երէց.—Ցամենայն ժամու.
Սարկ.— Եւ ևս խաղաղութեան.
Աւ. երէց.—Օրհնութիւն և փառք.
Սարկ.— Վասն հիւանդաց.
Քահ.— Փարատեա.
Սարկ.— Ցիշեա տէր.
Քահ.— Բարերար և բազում.
Դպիրներ.—Երանի որ խորհի-փոխ.
Սարկ.— Խնդրեսցուք.
Քահ.— Հայր գթութեան.
Աւ. երէց.—Հայր մեր։

Մեծի պահոց

Ողորմեա-ից յետոյ՝

Դասէղաս.—Խաւարեցաւ.
Աւ. երէց.—Ցամենայն ժամու.
Սարկ.— Եւ ևս խաղաղութեան.
Աւ. երէց.—Օրհնութիւն և փառք.
Սարկ.— Արթուն մտօք.
Քահ.— Զգեցո մեզ տէր.
Դպիրներ.—Տէր մի յիշեր.
Սարկ.— Վասն հիւանդաց.
Եւ այլն ըստ կարգին։

Իններորդ ժամու աղօթք—գ. ողորմեա.

Իններորդ ժամու աղօթքը ուղղում ենք

Աստուածորդուն, որովհետև այդ ժամին նախահայրը արտաքսուեցաւ դրախտից և նոյն ժամին Քրիստոս աւանդեց իւր հոգին խաչի վերայ և Ադամին ազատեց դժոխքից։

Գործնական վարժութիւն.

Աւ. երէց.—Հայր մեր.
Օրհնեալ որդիդ սուրբ.
2 քահ.— Ողորմեա—ատեան.
Աւ. երէց.—Ցամենայն ժամու.
Սարկ.— Եւ ևս խաղաղութեան.
Աւ. երէց.—Օրհնութիւն և փառք.
Սարկ.— Աղաչեսցուք.
Քահ.— Անկեալ առաջի քո.
Սարկ.— Ցիշեա տէր.
Քահ.— Բարերար և բազումողորմ.
Դպիրներ.—Սիրեցի—փոխ.
(Այստեղ ուտեաց օրերը ասւում է հոնգստեան շարական ձայնից)
Աւ. երէց.—Հոգւոցն հանգուցելոց.
Սարկ.— Եւ ևս խաղաղութեան. վասն հանգուցեալ.
Քահ.— Քրիստոս որդի.
Աւ. երէց.—Հայր մեր.

Մեծի պահոց

Ողորմեա-ից յետոյ՝

Դասէղաս.—Շարչարակցեալ.

Աւ. երէց.—Յամենայն ժամու.

Պարկ.— Եւ ևս խաղաղութեան.

Աւ. երէց.—Օրհնութիւն.

Պարկ.— Սուրբ սրտիւ.

Քահ.— Տէր զօրութեանց.

Դպիրներ.—Տէր մի՛ մատներ.

Դասէղաս.—Նահապետաց.

Պարկ.— Աղաչեսցուք.

Եւ այլն ըստ կարգին։

Երեկոյեան.

(Գլխաւոր մասերի մեկնութիւնը)։

Երեկոյեան ժամերգութիւնը կատարում ենք ի դէմս Որդւոյն Աստուծոյ, որի թաղման խորհուրդ ունի այդ կարգը, որովհետև այդ ժամին Յովսէփ Արեմաթացին իջեցրեց Յիսուսի մարմինը խաչի վրայից և դրեց գերեզմանի մէջ։

Խոնարհեցո սաղմոսը ասուած է Ադամի կողմից և այն խորհուրդն ունի, որ ինչպէս հիւանդը բժշկի ունկնդրութիւնն է խնդրում իւր ցաւը նորան յայտնելու, այսպէս էլ նա-

խահայրը հոգևոր հիւանդութեամբ շաղախուած աղերսում է Աստծուն, որ լսէ նորա ձայնին և առողջարար դեղ շնորհէ և բժշկէ իրան հիւանդութիւնից ու չարի հարուածներից։

Իսկ *Ապրեցոն* եկեղեցին ասում է Եւայի կողմից, որովհետև երբ Տէրը հարցնում էր նորան պտղի ճաշակման մասին՝ նա օձին պատճառ բերեց, որով կամեցաւ արդարանալ, բայց դատապարտուեց. վասնորոյ «Ապրեցո» սաղմոսով խնդրում է ազատել իրան չարից և դատապարտութիւնից։

Մեսեղի. Հին ուխտի եկեղեցին առաւօտ և երեկոյ հաց, գառն և դորակի մի չորրորդ մասն գինի էին դնում առաջաւորութեան սեղանը. իսկ նոր ուխտի եկեղեցին, որ մարմնաւորը հոգևորի փոխանակեց, հացի և գառան փոխանակ կարգեց երկու տուն «մեսեղի» ասել, և գինու դորակի չորրորդ մասի փոխարէն «Ուղիղ եղիցին» սաղմոսը չորս մասից բաղկացած։

Համբարձի փոխի և շարականի խորհուրդը այս է. առաւօտից մինչև երեկոյ աշխատելով և վաստակելով թէ հոգւով և թէ մարմնով խնդրում ենք Աստուծոյ օգնութիւնը, որ չըտկարանանք և թուլանանք ու ննջելու ժամը

հասած լինելով խնդրում ենք պահպանել մեզ հոգւոյ և մարմնի ամեն որոգայթից։

Գործնական վարժութիւն.
(Հասարակ օրուայ)

Աւ. երէց.—Հայր մեր.
Ես առ Աստուած կարդացի.
Սարկ.— Սպասէի Աստուծոյ իմոյ.
Աւ. երէց.—Փառք հօր.
Սարկ.— Այժմ և միշտ. և ևս խաղ.
Աւ. երէց.—Օրհնութիւն և փառք.
Դպիրներ.—Խոնարհեցո.—փոխ.
Աւ. երէց.—Փառք քեզ Աստուած.
Սարկ.— Եւ ևս խաղաղութեան.
Աւ. երէց.—Օրհնութիւն և փառք.
Դպիրներ.—Ապրեցո.—փոխ.
Աւ. երէց.—Օրհնեալ տէր.
Սարկ.— Հասեալքս ի ժամ.
Աւ. երէց.—Հասեալքս ի ժամ.
Դպիրներ.—Մեսեդիք-պատշաճի.
Ուղիղ եղիցին.
Սարկ.— Աղաչեսցուք.
Քահ.— Լուր ձայնից մերոց.
Դասէղաս.—Սուրբ Աստուած. Փառաւորեալ.
Աւ. երէց.—Փրկել զմեզ
Սարկ.— Եւ ևս խաղաղութեան.

Աւ. երէց.—Օրհնութիւն և փառք.
Դպիրներ.—Համբարձի-փոխ.
Դասէղաս.—Համբարձի շարականը.—պատշաճի.
Սարկ.— Վասն խաղաղութեան.
Քահ.— Հայր գթած.
Դպիրներ.—Որ բնակեալն—փոխ.
Աւ. երէց.—Զբարձրեալն զՔրիստոս.
Սարկ.— Եւ մեք միաբան.
Քահ.— Յոյս կենաց.
Սարկ.— Ցիշեա տէր.
Քահ.— Բարերար և բաղումողորմ.
Աւ. երէց.—Հայր մեր.

Կ ի ւ ր ա կ ն ա մ տ ի.

Ապրեցո-ից յետոյ՝
Դասէղաս.—Լոյս զուարթ—ձայնով.
Եկեալքս 'ի մտանել.
Մեսեդիքից յետոյ աղաչեսցուքի փոխարէն քարոզ-Ասասցուք։
Հայր գթածից յետոյ՝
փոխ.—Աստ օրհնեցէք.
Սարկ.— Խնդրեսցուք.
Դասէղաս.—Կեցո՛ տէր.
Տէր ողորմեա։
Քահ.— Թագաւոր խաղաղութեան.
Աւ. երէց.—Հայր մեր։

Խաղաղական

(Գլխաւոր մասերի մեկնութիւնը)

Խաղաղական ժամերգութիւնը Քրիստոսի դժոխքը իջնելու խորհուրդն ունի, ուր սպասում էին նրան արդարների հոգիները և Յիսուս ազատելով նոցա՝ խաղաղացրեց այն նեղութիւններից, որի մէջ գտնուում էին. խաղաղական է կոչվում այդ ժամերգութիւնը նաև նորա համար, որ մենք ցերեկուայ խոնջութիւնից հասնելով գիշերը՝ խաղաղութիւն և հանգիստ ենք տալիս մեր անձին։

Շնորհեա մեզ տէր. յայտնի է պատմութիւնից, որ երբ մի անգամ աւազակները կամենում էին կողոպտել Սևանայ վանքը և խաբէութեամբ ներս մտան արկղների մէջ փակուած իբրև առևտուրի ապրանք՝ յանկարծ հրաշալի կերպով յայտնուեց այդ դարանակալութիւնը և Սևանայ սուրբ հայրերը երգեցին «Շնորհեա մեզ տէր» խորհրդաւոր երգը, իսկ արկղները պահուած մարդկանցով գլորեցին ծովը. այդ երգը մինչև այժմ երգում ենք մեր եկեղեցում խաղաղական ժամերգութեան միջոցին, 'ի յիշատակ այդ մեծ հրաշքի և 'ի խորհուրդ հոգիների ազատութեան դժոխքից։

Մաղթանքով, քարոզով և աղօթքով խնդրում ենք Աստծուց, որ պահպանէ մեզ գիշերը, իւր լոյսը մեզ առաջնորդ տայ, որով ազատ մնանք գայթակղութիւնից։

Գործնական վարժութիւն։

Աւ. երէց.—Հայր մեր.
Տէր Աստուած փրկութեան.
Սարկ.— Մտցեն աղօթք իմ.
Աւ. երէց.—Փառք հօր.
Սարկ.— Այժմ և միշտ.—և ևս խաղ.
Աւ. երէց.—Օրհնութիւն.
Դպիրներ.—Ի կարդալ իմում—փոխ.
Դասէդաս.—Շնորհեա մեզ Տէր.
Աւ. երէց.—'Ի մերձենալ.
Սարկ.— Գոհացարուք.
Քահ.— Տէր բարերար.
Դպիրներ.—Տէր լոյս իմ.
Դասէդաս.—Նայեաց սիրով.
Աւ. երէց.—Տէր մի դարձուցաներ.
Սարկ.— Աղաչեսցուք.
Քահ.— Շնորհատու բարեաց.
Դպիրներ.—Երանեալ են. Բաժին կամ Արարի—հերթով.
Դասէդաս.—Ի քէն հայցեմք.
Խումբ.— Ատեան—մի տուն ստեղի.—մեծի պահոց չորրորդ երկուշաբթի օրից մին-

չև Ղազարու յարութիւնը։
Աւ. երէց.—Հոգւոցն հանգուցելոց.
Սարկ.— Եւ ևս խաղաղութեան.
Քահ.— Քրիստոս որդի.
Աւ. երէց.—Հայր մեր.

Հանգստեան.

Հանգստեան աղօթքը ուղղում ենք Հօր Աստծուն, որ իւր միածնի պահպանողական աջով պահպանէ մեզ գիշերը և ամեն ժամանակ թշնամու որոգայթներից. այդ ժամերգութիւնը կատարում ենք գիշերը քնից առաջ, ուստի և կոչւում է հանգստեան կամ եկեսցէ որովհետև սկսւում է Եկեսցէ սաղմոսով։

Գործնական վարժութիւն.

Աւ. երէց.—Հայր մեր.
Առաքեա տէր զլոյս քո.
Սարկ.— Մտից առաջի.
Աւ. երէց.—Փառք Հօր.
Սարկ.— Այժմ և միշտ. և ևս խաղ.
Աւ. երէց.—Օրհնութիւն.
Սարկ.— Եկեսցէ—փոխ.
Աւ. երէց.—Անձն իմ ի ձեռս քո.
Սարկ.— Աղաչեսցուք.
Քահ.— Տէր Աստուած մեր, դու պահեա.

Դասէդաս.—Խաղաղութեամբ քով.
Քահ.— Աւետարան (հանգստեան.)
Սարկ.— Սուրբ խաչիւս.
Քահ.— Պահպանեա.
Աւ. երէց.—Հայր մեր.
Անկանիմք.
Քահ.— Ընկալ քաղցրութեամբ.
Աստուած յաւիտենական.
Որդի Աստուծոյ.
Միաբան.—Փոխէփոխ.—Հաւատով խոստովանիմ.
Աւ. երէց.—Վասն սրբուհւոյ Աստուածածնի.
Սարկ.— Սուրբ զաստուածածինն.
Քահ.— Ընկալ տէր.
Աւ. երէց.—Հայր մեր.
զՀանգստեան աղօթս.
Քահ.— Փառք քեզ տէր Աստուած մեր.
Աւ. երէց.—Օրհնեալք եղերուք.

գ. Շարական.

Շարականը այն գիրքն է, որ բովանդակում է բոլոր հոգևոր երգերը, որոնք երգւում են եկեղեցում Աստուածպաշտութեան ժամանակ։

Հայաստանեայց եկեղեցում երգուող հոգևոր երգերը առաջին չորս դարում երգւում

էին յոյն և ասորի լեզուներով, քանի որ հայկական տառերը գործադրութեան մէջ չէին, իսկ հինգերորդ դարից սկսած, երբ ս. Սահակ և Մեսրովպ թարգմանիչները գտան և լրացրին հայոց տառերը և բոլոր եկեղեցական գրքերը հայերէնի վերածեցին, այդ ժամանակից շարականները երգւում են հայերէն։

Շարականների մեծ մասը յօրինեցին և կարգի դրին իրանք ս. Սահակն ու Մեսրովպը և բաժանելով ութն ձայնի վերայ յօրինեցին ութն ձայն եղանակները, որոնք են՝

աձ.— առաջին ձայն
ակ.— առաջին կողմ
բձ.— երկրորդ ձայն
բկ.— աւագ կողմ
գձ.— երրորդ ձայն
գկ.— վառ ձայն
դձ.— չորրորդ ձայն
դկ.— վերջ ձայն։

Բացի սոցանից կան երկու ձայն ծանր երգուող Ստեղի կոչուած և քանի մի այլ և այլ զարտուղի շարականներ։

Մնացեալ շարականները երգեցին նոցա աշակերտներն ու եկեղեցական ուրիշ հայրեր մինչև ԺԸ դար, որից յետոյ երգուած շարականներն այլ ևս անընդունելի եղան։

Բոլոր շարականները չորս տեսակի են բաժանւում.—

ա. Տէրունական.
բ. սրբոց
գ. պահոց
դ. հանգստեան

և դոցանից իւրաքանչիւրը բաղկացած են այլ և այլ շարականներից այլ և այլ աօներին կամ օրուան պատշաճ։

—

Շարականներից իւրաքանչիւրի տեսակը ցոյց տալու համար լուսանցքներում նշանակւում են հետևեալ կրճատմունքներով.—

Ս.— Օրհնութիւն.
Հ.— Հարց
Մ.— Մեծացուսցէ
Ո.— Ողորմեա
Տ.— Տէր յերկնից
մկ.— Մանկունք
ճշ.— Ճաշու
հբ.— Համբարձի
ստ.— Ստեղի

Իսկ ութն ձայն աւագ օրհնութեանց լուսանցներում դրած կրճատ խօսքերը Հին կտակարանի զանազան իմաստների կրճատմունքներ են։

դ. Ճաշոց գիրք.

Ճաշոցը հին և նոր կտակարանի ժողովածու է դասաւորուած ամեն օրուայ կարգով, որոնք կարդացւում են եկեղեցում աստուածպաշտութեան ժամանակ։

Ճաշոց է կոչւում այն պատճառով, որովհետև այդ գիրքը մեծ մասամբ կարդացւում է ճաշու ժամերգութեան ժամանակ։

Հին և նոր կտակարանի ընթերցումը եկեղեցում, ուրեմն և ճաշոց գրքի գործածութիւնը սկսուեցաւ առաքեալների ժամանակից առաջին դարում։

ե. Խորհրդատետր կամ պատարագամատոյց.

Խորհրդատետրը պարունակում է սուրբ պատարագի խորհուրդը, որ կատարում է պատարագիչ քահանան։

Մեր եկեղեցում գործածուած խորհրդատետրը յօրինուած է սուրբ Յակոբոս Տեառնեղբօր ձեռքով, լրացրած է ս. Յովհան Ոսկէբերան հայրապետի ծիսարանից, յետոյ լրացրել են մեր եկեղեցու նշանաւոր հայրերը՝ ս. Յովհան Մանդակունին և ս. Գրիգոր Նարեկացին. իսկ պատարագի արարողութեան կարգը

և երգեցմունքը աւանդեց մեզ ս. Գրիգոր Լուսաւորիչն առնելով Կեսարիայի եկեղեցուց, որով և կատարում էր մեր եկեղեցին պատարագի ս. խորհուրդը, սակայն հետզհետէ աւելի ճոխացաւ և կարգի ընկաւ ս. Սահակ և Մեսրովպ թարգմանիչների և ս. Յովհան Մանդակունու ձեռքով։

Զնայելով, որ այսքան փոփոխութիւններ կրեց պատարագի արարողութիւնը, բայց նորա գլխաւոր և էական մասերը բոլորովին նոյնն են, ինչպէս որ կատարւում էր քրիստոնէութեան առաջին դարերում։

Ս. Պատարագ.

Սահմանողը. ս. Պատարագի խորհուրդը Քրիստոսի մարդեղութեան խորհուրդն է և սահմանեց ինքը Յիսուս Քրիստոս իւր մատնութեան երեկոյին վերնատանը, ուր առնելով հաց՝ օրհնեց ու ասաց աշակերտներին՝ «Առէք կերէք, այս է մարմին իմ» և առնելով բաժակը՝ նոյնպէս օրհնեց և ասաց՝ «Արբէք 'ի սմանէ ամենեքեան այս է արիւն իմ նորոյ ուխտի». որոնց ճաշակման մասնակից անելով իւր աշակերտներին պատուիրեց նոցա կատարել այդ խորհուրդը ասելով «Զայս արարէք առ իմոյ յիշատակի»։ Բայց բուն և իս-

կական պատարագն այն էր, որ յաջորդ օրը ինքը մատոյց խաչի վերայ իւր անձը Հօր Աստծուն՝ մարդկան ազգի փրկութեան համար։ Եւ այնուհետև բոլոր քրիստոնեայ եկեղեցիք՝ սրբութեամբ կատարում են այդ Փրկչական աւանդը, այն է պատարագի ս. խորհուրդը կենդանեաց և ննջեցելոց համար։

Նիւթը։ Պատարագի համար Հայաստանեայց եկեղեցին գործ է դնում բաղարջ հաց— նշխար և անապակ—անջուր գինի։

Մեր եկեղեցին *բաղարջ* հացով է պատարագում նախ՝ այն պատճառով, որ այն հացը, որ Յիսուս վերնատանը բաշխեց առաքեալներին, բաղարջ էր, Հրէից բաղարջակերաց տօնի պատճառով և երկրորդ բաղարջ կամ անխմոր հացը օրինակ է Յիսուսի կուսածին և անապական մարմնին։

Իսկ *անջուր* կամ *անապակ* գինի ենք գործ դնում պատարագի համար, որովհետև գինին Յիսուսի արեան նշանակութիւնն ունենալով՝ նորա արիւնն ևս անապական էր։

Կատարողը. Պատարագի ս. խորհուրդը իրաւունք ունին կատարել միմիայն քահանան և ինչպէս քահանայապետներ՝ եպիսկոպոսը և կաթուղիկոսը՝ եկեղեցում և առհասարակ այն բոլոր մատուռներում, ուր օծուած վէմ քար կայ։

Պատարագի համար քահանան պարտաւոր է նախապէս պատրաստուիլ հսկումով և աղօթքով, հոգւոյ և մարմնի մաքրութեամբ և խոստովանելով քահանայի առաջ իւր մեղքերը. նոյն պատրաստութիւնն է պահանջւում և ամեն հաւատացեալ քրիստոնեայից, ով որ ցանկանում է մերձենալ սուրբ խորհրդին։

Պատարագի օրերը. ս. պատարագ մատուցւում է շաբաթ և կիւրակի օրերը, Տէրունական տօներին և հասարակ օրերը ըստ ցանկութեան հաւատացեալ ժողովրդեան, իսկ Ծննդեան և Զատկի ճրագալոյցներին՝ ս. պատարագ է մատուցւում երեկոներին ի պատիւ այդ երկու մեծահանդէս տօների։ Պատարագի խորհուրդը բոլորովին արգելուած է կատարել Առաջաւորաց պահքի հինգ օրերն և Քառասնորդական պահոց լուր օրերը, բացի շաբաթ օրերից։

զ. Ցաղարան.

Պատարագի երգերը, քարոզները, տաղերը և առհասարակ այն մասը, որ կատարում

են սարկաւագներն ու դպիրները, ամփոփուած են մի գրքի մէջ, որը կոչւում է Տաղարան։

է, Տօնացոյց.

Տօնացոյցը մի հրահանգ է, որ ցոյց է տալիս Հայաստանեայց եկեղեցու տօները, այդ տօներին երգուելու երգերը, շարականները, սաղմոսները, ընթերցուածները և առհասարակ ամեն տեսակ հանդիսակատարութիւնները, նոցա կատարման եղանակով։

Տօնացոյցը յօրինեցին ս. Սահակ և Մեսրովպ հայրապետները հինգերորդ դարում և հետզհետէ կարգի դրին մեր այլ և այլ հայրապետները, իսկ վերջնական կերպով կարգի դրեց անցեալ դարում Սիմէոն կաթուղիկոսը, բաժանելով երկու հատորի։

ը, Մաշտոց.

Մաշտոցը այն գիրքն է, որի մէջ գրուած են եկեղեցական խորհուրդների և հոգևոր ծէսերի կատարելու բոլոր պաշտամունքը, ուստի՝ կոչւում է *ծիսարան*։

Ծիսարանը գոյութիւն ունէր առաջին դարերից սկսած, բայց Յոյն և Ասորի լեզուով,

որովհետև հայերէն տառերի անգործածութեան պատճառով այդ լեզուներով էինք աստուածպաշտութեան կարգը կատարում Հայոց եկեղեցում. իսկ երբ հինգերորդ դարում ս. Մեսրովպը հայերէն տառերի պակասը լրացրեց՝ նա թարգմանեց, կարգի դրեց ծիսարանը, որ և նորա անունով կոչուեցաւ *Մաշտոց*։ Ներկայումս գործ է դրւում ծիսարանը երկու առանձին գրքերով.—մէկը պարունակում է իւր մէջ եկեղեցական խորհրդակատարութիւնները, օր. մկրտութեան, պսակի և քանի մի այլ ծիսական կարգեր, այն է ննջեցելոց թաղման, աղօրհնէքի, խաչալուայի և այլն, այդ գիրքը կոչւում է *ձեռաց մաշտոց*։ Իսկ միւսը բացի այդ ամենից պարունակում է և եկեղեցու հիմնարկէքն ու օծման կարգը, եկեղեցական ամեն պաշտօնեաների ձեռնադրութեան և թաղման կարգը և այլն, դա կոչւում է *մայր մաշտոց*։

թ, Կանոնագիրք.

Կանոնագիրքը այն ժողովածուն է, որի մէջ գրուած են առաքելական կանոնները, Երեք տիեզերական, այն է Նիկիայի, Կոստանդնուպօլսի և Եփեսոսի ժողովների կա-

նոնները և բացի դոցանից նաև Հայաստանեայց եկեղեցական-ազգային ժողովների դըրած կանոնները եկեղեցու կառավարութեան և բարեկարգութեան համար, որոնցով կառավարւում է մեր եկեղեցին մինչև այժմ։

ժ. Յայսմաւուրք.

Յայսմաւուրքը սուրբերի կենսագրութիւնն է, գրուած նոցա նահատակութեան կամ մահուան օրերով, որի համար էլ կոչւում է յայսմ-աւուր, այս ինքն այս օրուայ տօն կամ ընթերցմունք։

Յայսմաւուրքի կարդալու սովորութիւնը շատ հին է. դեռ առաքելական դարում սլատմում էին սուրբերի գործերը, որ լսողներն էլ հետևին նոցա արիական գործերին և առաքելական կեանքին։

Հայոց եկեղեցում կարդացուող Յայսմաւուրքը յոյն և ասորի լեզուներից թարգմանեց Գրիգոր Վկայասէր կաթուղիկոսը տասնումէկերորդ դարում, իսկ այնուհետև շատ անգամ փոփոխութեան ենթարկուեցաւ մեր եկեղեցական հայրերից զանազան ժամանակ և լրացուելով՝ զտուեցաւ աւելորդաբանութիւններից։

Յայսմաւուրքը մինչև այս դարուս սկիզբը կարդացւում էր մեր եկեղեցիներում երեկոյեան ժամերգութիւնից առաջ, իսկ այնուհետև վերացուեց այդ սովորութիւնը և միմիայն վանքերումն են կարդում։

Բ. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏԱԿԱՆ ԾԷՍԵՐ.

Ծէսը և արարողութիւնը աստուածպաշտութեան արտաքին նշաններ են, որոնք թէև կարևոր և խիստ օգտակար են, բայց առաքեալներն իրանք հաւատի միայն գլխաւոր պէտքը սահմանեցին, իսկ արարողական մասը, իբրև երկրորդական մաս, որոնք չեն վնասում եկեղեցու վարդապետութեան միութեանը, թողին սահմանել իրանց յաջորդներին, այդ պատճառով էլ ծէսերն ու արարողութիւնները միակերպ չեն բոլոր եկեղեցիներում, այլ տարբեր, միայն այդ բոլորի ոգին, հիմքն ու նպատակը մէևնոյն աստուածպաշտութիւնն է։

Մեր եկեղեցու գլխաւոր ծէսերը սոքա են.

ա. խորհուրդների կատարման ծէսերը.

բ. տօները.

գ. նիւթական եկեղեցու կազմակերպութիւնը.

դ. Քրիստոսի ս. խաչի, սրբոց մասունքների և պատկերների յարգութիւնը։

ե. պահք և ծոմապահութիւն։

զ. սրբազան արարողութիւններ։

է. հոգևոր սովորութիւններ։

ա. խորհուրդների կատարման ծէսերը։

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ և ԴՐՈՇՄ. մկրտութեան և դրոշմի խորհուրդը կատարւում է միասին մէկը միւսից յետոյ։

Ամենից առաջ եկեղեցու գաւթում, իսկ եթէ գաւիթ չունի, այր մարդկանց դասումը, քահանան կատարում է երդմնեցնելու կարգը, որի սկզբում ոլորում է նարօտը, իսկ յետոյ հրաժարիմքն ու դաւանութիւնն է ասում։

Նարօտը սպիտակ և կարմիր թելերի ոլորուն հիւսուածն է. սորա գործածութիւնը մնացել է քրիստոնէութեան առաջին դարերից, երբ հասակաւոր մկրտուողների գլխին պսակ էին դնում կամ նարօտ, որպէս յաղթութեան նշան ընդդէմ հեթանոսութեան. դորա փոխարէն այժմ գործ ենք դնում սպիտակ և կարմիր թելերից ոլորած նարօտը։

Երեսը դէպի արևմուտք *հրաժարիմք* ասելը ցոյց է տալիս մկրտուողի հրաժարուիլը խաւարի իշխանութիւնից, իսկ համառօտ դաւանութիւն ասելով հաստատում է քրիստոնէութիւն ընդունելը։

Այնուհետև կատարւում է *ջրի օրհնութիւնը*, որովհետև նախահօր պատուիրանազանցութեամբ անիծուեցան նաև բոլոր ա-

բարածները, ուստի և օրհնւում է ջուրը խաչով, աւետարանով և ս. Միւռոնի հեղմամբ, որպէսզի սրբուի և դառնայ նուիրական ջուր։

Յետոյ քահանայն նորից հաւաստիանալով, որ երեխան ցանկանում է քրիստոնեայ դառնալ, *երեք անգամ ընկղմում է ջրի մէջ* ամենասուրբ երրորդութեան անունով, որով երեխան ազատւում է սկզբնական մեղքից, իսկ երեք անգամ ընկղմելը օրինակ է Քրիստոսի երեքօրեայ թաղման։ Երեխային աւազանից հանելով փաթաթում են *սպիտակ կըտաւի մէջ*, որ սկզբնական անմեղութեան նշանն է։ Երեխային մկրտելիս ազգային կամ քրիստոնէական անուն են տալիս։

Հին ուխտի եկեղեցու սովորութեամբ երեխային մկրտութիւնից *քառասուն օր յետոյ* ծնողը տանում է եկեղեցի, ուր դորա համար սահմանուած կարգն է կատարւում ծննդականի և մկրտուածի վերայ։

ԴՐՈՇՄ. մկրտութիւնից յետոյ քահանան մկրտուածի *ողջոյ զգայարանքները օծում է* սուրբ միւռոնով, որով նա ստանում է ս. Հոգու շնորհը և դառնում Քրիստոսի զինուոր։

Դրոշմից անմիջապէս յետոյ մկրտուածին *հաղորդում են* Քրիստոսի մարմնոյ և Արեան։

Նորոգ մկրտածին քահանան տանում է

նորա տունը եկեղեցական հանդիսով և յանձնում ծնողին։

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ։ Ապաշխարութեան արտաքին ծէսը այսպէս է կատարւում. սուրբ հաղորդութեան մերձենալ ցանկացողը՝ 'ի նշան իւր կատարեալ զղջման ծունկ է չոքում քահանայի առջև և խոստովանում է իւր բոլոր յանցանքները, ասելով սահմանեալ «մեղայն»։ Իսկ քահանայն հարկաւոր խրատները տալուց և կարևոր չափով ապաշխարանք դնելուց յետոյ՝ *արձակումն է շնորհում* նորան։ Այն քահանան, որ խոստովանութիւնը կայտնի ում և ինչ՝ մեր եկեղեցու օրէնքով զըրկւում է ընդ միշտ քահանայութիւնից։

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ։ Ձեռնադրութեան հանդէսը Հայաստանեայց եկեղեցին սահմանած է տօնել ամենաշքեղ կերպով, ի նկատի ունենալով եկեղեցու պաշտօնեաների կոչման նուիրական սրբութիւնը և այդ խորհրդի վեհութիւնը։ Ձեռնադրութեանց մանրամասն խրատները բովանդակւում են Մայր Մաշտոցի մէջ։

(Կրկնել նախընթացից «քահանայութիւնը»).

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ։ Պսակի խորհրդից առաջ քահանան գնում է հարսի տունը և օրհնելով

փեսայի տալիք *նշանը* տալիս հարսին։ Այս սովորութիւնը այժմ նոյն իսկ պսակի օրն է կատարւում։

Նոյն օրը փեսայի տանը քահանան օրհնում է *հալաւը*, կամ փեսայի և հարսի հանդերձները, որ նախածնողների սկզբնական զգեստի նմանութիւնն ունի։

Այնուհետև գնում են եկեղեցի և քահանան նախապէս *խոստովանեցնելով* երկուսին ևս նախապէս տեղեկանում է, թէ կա՞յ արդեօք *երկուստեք համաձայնութիւն*, յիշեցնում է նոցա պսակի խորհուրդը և յորդորում է մինչև մահ անբաժան ապրել և սիրել միմեանց. և ապա զգեստաւորուելով հրապարակով նոյնն է կրկնում, դարձեալ հարցնելով համաձայն են երկուսն էլ այդ միութեան թէ ոչ և երբ նոքա հրապարակով յայտնում են իրանց յօժարութիւնը, հարսնացուի աջը տալով փեսայի ձեռքը՝ կատարում է ս. խորհուրդը և կապում երկուսի պարանոցին *նարօտ*։

Հայոց եկեղեցին թագի գործածութիւնը չունի, բայց մի քանի տեղերում ընդունուած է իբրև նորամուծութիւն։

Պսակի խորհուրդի վերջին քահանան օրհնում է *բաժակը* ի նշան Քրիստոսի Կանա Գալիլիայի հարսանիքում կատարած հրաշագործութեան և խմեցնում նորապսակներին, որից յետոյ եկեղեցական հանդիսով տանում է նոցա տուն։

ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄՆ։ Հայաստանեայց եկեղեցին վերջին օծման խորհուրդը կատարում է առանց օծման. այդ խորհրդի արտաքին ծէսը այսպէս է կատարւում. քահանան գնում է ծանր հիւանդի մօտ և սահմանեալ կարգը կատարելով խոստովանեցնում և հաղորդում է նորան, որով նա սրբւում է ներելի մեղքերից։ Այդ գործողութիւնը կոչւում է նաև *թոշակ*։

Բ. Տօները։

Տօն նշանակում է հանգիստ կամ ազատութիւն աշխարհային գործերից, որ առանց արգելքի կարողանանք Աստծուն ծառայել։ Տօն օրերը եկեղեցին սահմանադրել է կատարել կամ Տէրունական որեւէ գլխաւոր դէպքի և կամ նշանաւոր սուրբերի յիշատակը։

Եկեղեցին Տէրունական տօները սահմանել է այն նպատակով, որ մենք յիշենք այն անցքերը, որոնք քրիստոնէական հաւատի հիմքը են կազմում, որ մարդս կեանքի հոգսերի մէջ մի բարոյական մխիթարութիւն ու-

նենայ և Աստծուն շնորհակալութիւն մատուցանենք նորա մեզ տուած բարութեանց համար. իսկ սուրբերի տօները սահմանուած են յաւերժացնելու և յարգելու առաքինի մարդկանց յիշատակը, և որպէս զի աշխատենք նըմանել նոցա կեանքի օրինակին: Այստեղից պարզ է, որ տօն օրերը պէտք է թողնենք մեր աշխարհային բոլոր զբաղմունքը և նուիրուինք հոգևոր և աստուածահաճոյ գործերին:

Եկեղեցու անդրանիկ տօնը Քրիստոսի յարութեան տօնն է, որ սահմանեցին տօնել առաքեալները Քրիստոսի յարութիւնից անմիջապէս յետոյ՝ միաշաբաթ օրը, անուանելով կիւրակէ, որ նշանակում է Տէրունական: Այդ տօնը Հայոց եկեղեցին մինչև այժմ էլ տօնում է կիւրակի օրերը:

Հայոց եկեղեցական տօները երկուսի են բաժանւում. անշարժ և շարժական. և այս առաջանում է նորանից, որ Զատկի տօնը, որից կախումն ունին մնացեալ տօների մեծագոյն մասը, միշտ միևնոյն օրը չի գալիս և դորա հետ միասին յետ ու առաջ են շարժւում և մնացեալ տօները:

Անշարժ տօներն են՝ Մարիամ ս. Կուսի աւետումն, Յիսուսի ծնունդը, Տեառնընդառաջ

և Աստուածածնի երեք տօները. իսկ Զատկի տօնը և մնացեալ բոլոր տօները շարժական են:

Մեր եկեղեցին ապաշխարութեան օրերը ոչ մի տօն չէ տօնում, բացի անշարժ տօներից. միմիայն առաքեալների սահմանադրութեամբ մեծ պահքի շաբաթ օրերը կատարւում է սրբոց յիշատակ:

Բացի սովորական տօները, մեր եկեղեցին շաբաթուայ իւրաքանչիւր օրուան առանձին նշանակութիւն է տալիս. այսպէս՝

Միաշաբաթ կամ կիւրակէ՝ յարութեան և արարչութեան ա. օրուան է նուիրուած:

Երկուշաբթի օրը յիշատակ է հրեշտակաց և արարչութեան բ. օրուայ.

Երեքշաբթի՝ մարգարէից և գ. օրուայ.

Չորեքշաբթի՝ ս. Կուսի Աւետեաց և դ. օրուայ.

Հինգշաբթի՝ առաքելոց և ե. օրուայ.

Ուրբաթ՝ Խաչի և զ. օրուայ.

Շաբաթ՝ սրբոց, Քրիստոսի թաղման և հանգստեան:

ՏԵՍԱԿՆԵՐԸ՝ Տօները երկու տեսակ են՝ Տէրունական և սրբոց.

Տէրունական բոլոր տօները, որոնց թւում և Աստուածածնայ տօները, պահում ենք կիւ-

բակի։ Իսկ սրբոց տոներից կիւրակի են պահ-
ւում միայն քանի մի նշանաւոր ընդհանուր
և ազգային սրբոց տոներ, մնացեալները չեն
պահւում։

Ծիրանակաւոր տօներ։

Տէրունական կոչւում են այն տօները,
որոնք մեր Տէր Յիսուս Քրիստոսի երկրաւոր
կեանքի նշանաւոր դէպքերի յիշատակին են
նուիրուած. դոքա են՝

Ապրիլի 7. Աւետումն ս. Կուսին։ Աւե-
տեաց տօնը անշարժ է և կատարւում է միշտ
Ապրիլի 7-ին, որովհետև կապ ունի Քրիստոսի
ծննդեան տօնի հետ։

Յունուարի 6 ծնունդ եւ մկրտութիւն
Քրիստոսի։ Քրիստոսի ծննդեան և մկրտու-
թեան տօնը նոյնպէս անշարժ է և կատար-
ւում է միշտ Յունուարի 6-ին. առաջին չորս
դարում բոլոր քրիստոնեաները այդ տօները
կատարում էին միասին Յունուարի 6-ին. հին-
գերորդ դարից միւս ազգերը Քրիստոսի ծը-
նունդը սահմանեցին Դեկտեմբերի 25-ին տօ-
նել, իսկ մկրտութիւնը Յունուարի 6-ին, բայց
Հայոց եկեղեցին հաստատ մնաց առաքելա-
ւանդ սահմանադրութեան վերայ և մենք
մինչև այսօր տօնում ենք երկու տօնը միա-

սին Յունուարի 6-ին։ Այդ տօնը տեւում է ութ
օր առանց պահքի։

Յունուարի 13. անուանակոչութիւն Տեա-
ռոն։

Փետրուարի 14. Տիրոջ քառասնօրեայ
տաճար տանուելը։

Ծաղկազարդ — Քրիստոսի հանդիսաւոր
մուտքը Երուսաղէմ։

Զատիկ — Յիսուսի յարութիւնը։ — Յիսու-
սի յարութիւնը պատահեցաւ Հրէից Պասէքի
տօնին, այն է Հրէից Եգիպտոսից դուրս գա-
լու օրը. Պասէք նշանակում է ելք. զատիկ
նոյնպէս նշանակում է անցատումն, հեռանա-
լը. այդ պատճառով էլ Յիսուսի յարութեան
տօնը կոչւում է նաև Պասէք կամ Զատիկ, ո-
րովհետև ինչպէս Հրէաները ազատուեցան Ե-
գիպտոսի ծառայութիւնից, այնպէս էլ Յիսուս
իւր յարութիւնով մարդկային ազգը ազատեց
յաւիտենական մահից և ընդհանրական յարու-
թեան յոյս պարգևեց մեզ։

Յիսուսի յարութեան տօնը, իբրև անդ-
րանիկ տօն, ամենայն շքեղութեամբ ենք կա-
տարում. նախընթաց երեկոյին լինում է նա-
ւակատիք և այդ երկոյին ս. Պատարագից յե-
տոյ թաթախւում ենք ուտեաց կերակուրնե-
րով բացի մսից։

Երեկոյեան լինում է ճրագալոյց, այսինքն եկեղեցիներում և ամեն տեղ ճրագավառութիւն է լինում։

Գիշերը հսկում է լինում։

Առաւօտը լինում է թափօր և ապա հանդիսաւոր պատարագ։

Քահանայք գնում են ժողովրդի տները աւետելու Քրիստոսի յարութիւնը։

40 օր յարութեան տօն է կատարւում և ուտիք է լինում։

Համբարձումն, որ կատարւում է միշտ յիսուներորդ օրը Զատկից յետոյ։

Սուրբ Հոգու գալուստը վերնատանը։ Պենտէկոստէ կամ Յինունք։ Այդ տօնը կոչւում է Պէնտէկոստէ (50 օր), որովհետև հրէաները Պասէքի 50-երորդ օրը տօնում էին և այդ տօնին իջաւ սուրբ Հոգին առաքեալների վերայ։

Հոգեգալստեան տօնը ս. Ներսէս Շնորհալու սահմանադրութեամբ կատարւում է եօթն օր պահեցողութեամբ և պատշաճաւոր շարականներով։

Քրիստոսի Պայծառակերպութիւնը Թափոր լերան վերայ։ Այդ տօնը կոչւում է և *Վարդավառ*, որովհետև երբ Ս. Գրիգոր Լուսաւորիչը տօներ էր սահմանում՝ Պայծառակերպութեան տօնը կարգեց հին հայոց Վարդավառ տօնի փոխարէն, որի անունը մնաց մինչև այժմ, ինչպէս նաև հին Վարդավառի տօնական սովորութիւնները, այն է միմեանց վերայ ջուր ցանել և աղաւնի թռցնելը։

Ս. Խաչ.—Ս. Խաչի վերացումը և Խաչգիւտ։ Խաչվերացի տօնը կատարւում է մեծ հանդիսով։ Այդ օրը երեկոյեան մի ափսէի վերայ բազմեցնելով կենաց փայտի մասունք պարունակող Խաչը և զարդարելով ռեհանով, ծաղիկներով և վարդաջրով՝ թափօր են հանում եկեղեցու դաւթում և տեառնագրում աշխարհի չորս կողմերը։ Խաչվերացի տօնը կատարւում է ութն օր։

Աստուածածնի տօներ.

Վերափոխումն։ Այս տօնը շարժական է և կատարւում է օգոստոս ամսին, այդ օրը եկեղեցիներում կատարւում է խաղողի օրհնութիւն։

Դեկտեմբերի 9. յղութիւն ս. Աստուածածնի Աննայից։

Սեպտեմբերի 8. ծնունդ ս. Կուսին։

Նոյեմբերի 21. երեքամեայ տաճարը տանուիլը։

Հոգեգալստից յետոյ չորրորդ կիրակին տօնւում է Աստուածածնայ տփոյ գտման տօնը, 'ի յիշատակ այն դէպքի, որ երկու իշխաններ ուխտ գնալով Երուսաղէմ՝ գտան մի հրէայ կնոջ մօտ Աստուածածնայ գլխադիրը և վերցնելով տանում են Կոստանդնուպօլիս պատրիարքին, որ հանդիսով դնում է եկեղեցում և տօն սահմանում։

Վերափոխումից յետոյ երրորդ կիրակի օրը տօնում ենք ս. Աստուածածնայ *Գօտին գտնելու* յիշատակը, որ գտնուելով Երուսաղէմում տարան Կ. Պոլիս և ի պատիւ նորա շինելով առանձին եկեղեցի՝ դրին այնտեղ։

Մրոց գլխաւոր տօներ.

Տօն սուրբ *Թադէոս* և *Բարդուղիմէոս* առաքեալների և Հայաստանի առաջին Լուսաւորիչների։

Թադէոս առաքեալի և *Սանդուխտ* կուսի նահատակութեան տօնը։

Հայաստանի երկրորդ Լուսաւորիչ *ս. Գրիգոր* Հայրապետի *շարշարանաց* և վիրապը մտնելու տօնը։

Ս. Գրիգոր Լուսաւորչի *վիրապից ելնելու* տօնը։

Ս. Գրիգոր Լուսաւորչի *նշխարները գտնելու* տօնը Գառնիկ ճգնաւորի ձեռքով։

Ս. Էջմիածնի տօնը, որ ամենամեծ հանդիսով կատարւում է Հայաստանեայց բոլոր եկեղեցիներում (*եկեղեցու տօն*)։

Ս. Գաբրիէլ և *Միքայէլ* Հրեշտակապետների տօնը։

Ս. Սահակ և *Մեսրովպ* Թարգմանիչների տօնը, որոնք գտան Հայոց տառերը, Թարգմանեցին Աստուածաշունչ գիրքը և ուսումնարաններ բանալով՝ ուսում և դպրութիւն տարածեցին ամեն տեղ։

Ս. Վարդանանց զօրավարների և հազար երեսուն և վեց վկաների նահատակութեան տօնը։

Ամենայն սրբոց տօնը։ Բացի վերը յիշած սրբերից և մնացեալ երկրորդական սրբերից, որոնց տօնում է եկեղեցին, մեր եկեղեցին սահմանած ունի այլ ևս մի տօն *ամենայն սրբոց* անունով այն ամեն անձանց յիշատակի համար, որոնք իրանց կեանքը անցրել են սրբութեամբ և առաքինական գործերով, բայց չեն տօնւում կամ որոնց գործերը յայտնի չեն եղել։

Ցօնական յատուկ շաբաթներ.

Բացի յիշատակած տօներից և մնացեալ սրբոց յիշատակներից՝ մեր եկեղեցին տարուայ շաբաթների մեծ մասը նուիրած ունի 'ի յիշատակ աւետարանական զանազան առակների կամ կրօնական դէպքերի, դոքա են.—

ՄԵԾ ՊԱՀՔԻ առաջին և երկրորդ կիւրակիները՝ կոչւում են *արտաքսման* և յիշատակ է Ադամի արտաքսուելուն դրախտից։

Երրորդ կիւրակին կոչւում է *Անառակի* և յիշատակ է Անառակ որդու առակին, որ Յիսուս պատմեց իւր աշակերտներին։

Չորրորդ կիւրակին կոչւում է *Տնտեսի* և յիշատակ է Տնտեսի և մեծատան ու աղքատ Ղազարոսի առակներին։

Հինգերորդ կիւրակին կոչւում է *Դատաւորի* և յիշատակ է անիրաւ դատաւորի առակին։

Վեցերորդ կիւրակին կոչւում է *գալստեան*, որ յիշատակ է Քրիստոսի առաջին և երկրորդ գալստեան։

ԱՒԱԳ ՇԱԲԱԹ կոչւում է մեծ պահքի վերջին շաբաթը, որ Յիսուսի չարչարանքի, մահուան և թաղման խորհուրդն ունի. իսկ իւրաքանչիւր օրն առանձին խորհուրդ ունի. այսպէս՝

Երկուշաբթի. երգերն ու ընթերցուածներն աշխարհի արարչութեան, Ադամի արտաքսման և Աստուծոյ տուած խոստման են նուիրուած։

Երեքշաբթին յիշատակ է ջրհեղեղի, տասն կուսանաց, քանքարների առակին և վերջին դատաստանին։

Չորեքշաբթին յիշատակ է Սոդոմ Գոմորի կործանման և Յուդայի մատնութեան։ Չորեքշաբթի սովորական ժամերգութիւնից յետոյ գիշերը կատարւում է գիշեր ժամու աղօթքը։

Հինգշաբթին յիշատակ է խորհրդական ընթրիքի վերնատանը, ուր Քրիստոս սահմանեց հաղորդութեան խորհուրդը։

Այդ օրը երեկոյեան ժամին կատարւում է ոտնալուայի կարգը, որի խորհուրդն այս է, թէ ինքը Փրկիչը և Տէրը խոնարհեց և լուաց իւր աշակերտների ոտները, որով սիրոյ և խոնարհութեան յորդոր կարդաց իւր աշակերտներին և աւետարանի հետեւողներին։

Նոյն գիշերը կատարւում է հետեւեալ օրուայ՝ աւագ ուրբաթի գիշերային և առաւօտեան ժամերգութիւնը, չարչարանաց կարգը և կարդացւում է Յիսուսի կտակը։

Ուրբաթ օրը յիշատակ է Քրիստոսի խաչելութեան և մահուան։ Ճաշի ժամերգութեանը կատարւում է խաչելութեան, իսկ երեկոյին՝ թաղման կարգը։

Շաբաթ օրը Քրիստոսի թաղման յիշատակն է։ Երեկոյին կատարւում է նախատօնակ, ճրագալոյց է լինում և պահքը լուծւում է ամեն տեսակ ուտեաց կերակրով, բացի մսից։

Յիսունք։

Զատկի հետեւեալ կիւրակին կոչւում է *նոր կիւրակի* կամ *կրկնազատիկ*, 'ի յիշատակ Յիսուսի իւր յարութիւնից յետոյ աշակերտաց երեւալուն վերնատանը և Թովմա առաքեալի հաւատալուն։ Իսկ Զատկից մինչև Հոգեգալուստ եղած յիսնօրեայ միջոցը կոչւում է *յինունք* կամ *յինանց* օրեր (յիսնունք—50 օր)։

Երրորդ կիւրակին կոչւում է *աշխարհամատրան*. այդպէս կոչւում է այն առաջին եկեղեցին, որ առաքեալները հիմնեցին վերնատան կից, ինչպէս նաև բոլոր նշանաւոր և աւագ եկեղեցիները։ Մեզանում Աշխարհամատուռն կոչւում է Մայր Աթոռ Կաթուղիկէ Էջմիածինը։

Չորրորդ կիւրակին կոչւում է *Կարմիր կիւրակի*։

Հինգերորդ կիւրակի *Երեւման խաչի* տօն է 'ի յիշատակ այն դէպքի, որ 351 թ. մայիսի 7-ին Քրիստոսի ս. Խաչը խաչաձև ճառագայթներով փայլեց օդի մէջ Գողգոթա սարի գլխին, որի լոյսը տարածւում էր մինչև Ձիթենեաց սարի գլուխը։

Եօթներորդ կիւրակին կոչւում է *երկրորդ ծաղկազարդ* և այս խորհուրդն ունի.— աւանդութիւն կայ, թէ երբ ս. Գրիգոր Լուսաւորիչը Խորվիրապի մէջ էր, մի հրեշտակ սպաւաւորում էր նորան. Համբարձման չորրորդ օրը՝ կիւրակի—հրեշտակն էլ չէ երեւում և միւս օրը ս. Գրիգորը պատճառը հարցնելով իմանում է, որ այդ օրը երկնքում հրեշտակների դասը տօնում էր Յիսուսի երկրից համբառնալու և երկինքը մտնելու տօնը. և այդ օրը չորրորդ դասակարգութեան տօնն էր։ 12-դ դարում Գրիգոր Վկայասէր կաթուղիկոսը սահմանեց հանդիսով տօնել այդ օրը և գրեց այդ առիթով մի յատուկ շարական «Մեծահրաշ» սկսուածքով։

Հոգեգալստից յետոյ առաջին կիւրակին կոչւում է *յարութեան առաջին կիւրակի* և

այնուհետև բոլոր կիւրակիները յարութեան են կոչւում մինչև բուն բարիկենդանը։

Հոգեգալստի երկրորդ շաբաթը *Արարատեան* դաշտի տօնն է և Հայոց նուիրական տօների գլխաւորները տօնւում են այդ շաբաթուայ ընթացքում, այսպէս՝ երկուշաբթի *Հռիփսիմեան* կոյսերի տօնն է, երեքշաբթի *Գայիանեան* կոյսերի, հինգշաբթի *Յովհաննէս Կարապետի* և *Աթանագինէ* եպիսկոպոսի, որոնց նշխանները սուրբ Գրիգոր Լուսաւորիչը զետեղեց Տարօն գաւառի Մուշ գիւղաքաղաքում, իւր շինած եկեղեցու մէջ, շաբաթ *ս. Գրիգոր* Լուսաւորչի Խորվիրապից դուրս գալու տօն է և կիւրակի՝ *ս. Էջմիածնի* տօնն է։ Այդ բոլոր տօներն էլ կատարւում են նախատօնակներով և մեծ հանդիսով, մանաւանդ ս. Էջմիածնի տօնը, որ ս. Լուսաւորիչն է սահմանել հէնց շինելուց յետոյ։

Երկրորդ կիւրակէի շաբաթ օրը տօնում ենք *Մեծ Ներսէս* հայրապետի տօնը, որ չորրորդ դարում վարելով հայրապետական իշխանութիւնը նշանաւոր ծառայութիւն արաւ եկեղեցուն և ժողովրդեան, հիմնելով բազմաթիւ բարեգործական հաստատութիւններ և կարգելով նոցա վերայ կառավարիչ իւր սարկաւագ Խադին։

Վերափոխման բարիկենդանի շաբաթ օրը տօն է *Եփեսոսի տիեզերական սուրբ ժողովի* 200 հայրապետների, որ 431 թուին գումարուեցաւ Եփեսոս քաղաքում, ուր դատապարտեցին յունաց Նեստոր աղանդաւոր պատրիարքին, որ Յիսուսին լոկ մարդ էր համարում և ս. Կուսին՝ մարդածին և ոչ աստուածածին և խոստովանեցին Յիսուսին Աստուծոյ ճշմարիտ որդի և սուրբ կոյսը Աստուածածին։

Վերափոխման շաբաթ օրը տօն է *Շողակաթի ս. Էջմիածնի*, ըստ տեսլեան սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ։ Այդ տօնը յիշատակ է ս. Լուսաւորչի տեսիլքին, երբ մի լուսեղէն մարդ, այն է Աստուծոյ Միածին Որդին ոսկէ ուռը ձեռին իջաւ Վաղարշապատի քաղաքամիջում և նորա իջման տեղը (Էջմիածին) լուսեղէն կերպով գծագրուեցաւ մայր եկեղեցու շինութեան ձևը և Աստուածեղէն շողը կաթեցաւ այնտեղ, որի համար և ասում ենք *Շողակաթ*։

Սուրբ Խաչի վերացման բարիկենդանի շաբաթ օրը տօն է *Նիկիոյ տիեզերական ս. ժողովի* 318 հայրապետների, որ գումարուեցաւ 325 թուին Նիկիա քաղաքում, ուր հերքեցին Աղէքսանդրացի Արիոս երէցի աղանդը և գրեցին հաւատոյ դաւանութիւնը։«Հաւա-

տամքը»։ Արիոսը քարոզում էր թէ Որդին Աստուած ծնուած չէ Հօր էութիւնից։

Սուրբ Խաչի վերացման տօնից երկու շաբաթ յետոյ տօնում ենք *Վարագայ ս. խաչի* տօնը։ Յայտնի է, որ Հռիփսիմեան կոյսերը Հռոմից Հայաստան փախչելով՝ նախապէս բարձրացան Վարագ սարը և այնտեղ Հռիփսիմէ կոյսը թաղեց Քրիստոսի խաչափայտի մասունքը, որ ժառանգաբար անցել էր իրան և որ կրում էր իւր պարանոցին. խաչափայտի այդ մասը 653 թուին մի հրաշքով յայտնուեցաւ նոյն սարի վերայ ճգնուող Թոդիկ ճգնաւորին և Ներսէս գ. Շինող կոչուած հայրապետը այդ խաչի պատուին տօն և պահք սահմանեց հոկտեմբեր ամսին։ Այդ տօնն է ահա *Վարագայ ս. խաչի* տօնը։

Առանձին առանձին տօնում ենք Հայոց երկու նշանաւոր թագաւորների տօնը, *Արգարի*՝ որ Քրիստոսի ժամանակ Հայաստանում առաջին անգամ քրիստոնէութիւնը տարածելու գլխաւոր պատճառը եղաւ, և *Տրդատի*, որ մեծապէս նպաստեց Հայաստանի երկրորդ լուսաւորութեանը քրիստոնէական լուսով։

Աւագ տօներ։ Ծննդեան տօնից առաջ, ս. Յովհան Օձնեցի Հայրապետի կարգադրութեամբ տօնում ենք *Դաւիթ մարգարէի* և *Յակոբ առաքեալի*, *Ստեփաննոս նախավկայի*, *Պետրոս* և *Պօղոս առաքեալների* և *Յակոբոս առաքելու* և *Յովհաննէս աւետարանչի* յիշատակը առանձին առանձին, իբրև Յիսուսի ծննդեան վկաների. ուստի և կոչւում են աւագ տօներ։ Այս տօները կատարւում են նախատօնակներով և առանձին հանդիսով։

Ծննդից մինչեւ բուն բարեկենդանը տօնւում են հետեւեալ գլխաւոր տօները.

Յովհաննէս Մկրտչի ծնունդը, ութօրեքի հետեւեալ օրը։

Ղեւոնդեանց քահանաների տօնը, որով մենք յիշում ենք հինգերորդ դարի արիական պատերազմները հաւատի համար, ուր նահատակուեցան Յովսէփ կաթուղիկոսը, Սահակ եպիսկոպոս, Ղեւոնդ երէց և ուրիշ շատ ընտիր և անձնազոհ հոգեւորականներ։ Ղեւոնդեանց տօնը կատարում ենք բուն բարեկենդանի շաբաթի երեքշաբթի օրը։

Վարդանանց զօրավարների և հազար

երեսուն և վեց վկաների նահատակութեան տօնը մեծ հանդիսով կատարուում է նոյն շաբաթի հինգշաբթի օրը։

Բուն բարիկենդանի շաբաթ օրը տօն է միշտ Կոստանդնուպօլսի սուրբ ժողովի և հարիւր յիսուն հայրապետների տօնը, որ գումարուեցաւ 381 թուին Կ. Պոլսում և ուր նզովեցին Կ. Պոլսի պատրիարք Մակեդոնին, որը հայհոյում էր սուրբ Հոգուն։

գ, Նիւթական եկեղեցու կազմակերպութիւնը.

Նիւթական եկեղեցին զանազան ազգերի մէջ տարբեր է լինում թէ արտաքին ձեւով ամբողջապէս կամ մասամբ և թէ նորա կազմակերպութեան վերաբերեալ ծիսակատարութիւններով։ Իսկ թէ ինչպէս է այդ ամենը կատարում մեր եկեղեցին՝ արդէն մանրամասն ասացինք իւր տեղում։

Կրկնել „Աստուածպաշտութեան տեղը—եկեղեցին„)։

դ, Ս. Խաչի, սրբոց մասունքների եւ պատկերների յարգութիւնը։

Հին դարերից սկսած Քրիստոսից յետոյ խաչի նշանը, իբրեւ տէրունական և մարդկային ազգի փրկութեան նշան, յարգում և պատուում էին քրիստոնեայք, բայց ոչ թէ կռապաշտների պէս պաշտում էին նորան։ Այսպէս էլ շատ վաղուց սովորութիւն մտաւ եկեղեցին զարդարել փրկչական պատկերով և հին ու նոր կտակարանի զանազան դէպքերի նկարներով։

Մենք բացի յարգանքից նաեւ համբուրում ենք պատկերները, բայց այդ համբոյրը ոչ թէ անզգայ պատկերին ենք տալիս, այլ նորա նախատիպին, մեր մտքերը ուղղելով պատկերի տիրոջ, դէպի որը աղօթում ենք կամ նոցա միջնորդութիւնը խնդրում։

(Կրկնել Ե. դէպից „Խաչ“ եւ „Պատկեր“)։

ե, Պահք եւ ծոմ։

Պահք կամ պահեցողութիւնն այն է, որ մարդիկ որոշեալ օրերին զրկում են իրանց մսեղէն և իւղեղէն կերակրներից. իսկ ծոմը ուղղակի անսուաղութիւն է, որպիսի օրերը

ոչինչ չէին ուտում մինչեւ երեկոյ, իսկ երեկոներն էլ գրեթէ հացով ու ջրով էին լուծում, ինչպէս նաեւ Հայերն էլ՝ աղով ու հացով, որից և քառասնորդական պահքը աղուհացից օրեր անուանեցաւ մեզանում։

Պահքը սահմանուած է ժուժկալութեան համար, որպէս զի մարդս կարողանայ զսպել իրան որկրամոլութիւնից և զեղխ կեանքից. և պարտադիր է ամեն քրիստոնէի համար, իսկ ծոմը միայն կամաւոր է։

Հայաստանեայց եկեղեցին սահմանած է ամեն չորեքշաբթի և ուրբաթ պահել՝ առաջինը ի պատիւ Աւետեաց Աստուածամօր, իսկ երկրորդը իբրեւ յիշատակ Յիսուսի խաչելութեան և այդ օրերը սրբոց տոներ ամենեւին չեն լինում։ Բացի դորանից Հայոց եկեղեցին Տէրունական հինգ տոների և իւրաքանչիւր ամսուայ համար մի մի շաբաթ պահք ունի, այն է 17 շաբաթ. սուրբերի համար մեր եկեղեցին պահք չունի սահմանած, այլ միայն տօն, իսկ նոցա անունով կոչուած պահքերը՝ ամսական են։ Եւ այսպէս՝ ս. Սարգսի, Եղիական, Լուսաւորչի և ս. Յակոբի պահքերն ամսական պահքեր են. շաբաթական պահքերը հետեւեալներն են.

ա. Դեկտեմբերի 30-ից մինչեւ Յունուարի 5-ը ի պատիւ Քրիստոսի ծննդեան, և այդ ժամանակ տոներ չեն տօնւում, բացի շաբաթ օրից։

բ. Առաջաւորաց պահք-5 օր. չորս օր առանց տոների, իսկ ուրբաթ օրը՝ Յովնան մարգարէի յիշատակ։

գ. Քառասնորդական կամ մեծ պահք, յիսուն օր, որոնցից իւրաքանչիւր շաբաթ սրբոց տոներ են կատարւում։

դ. Եղիական պահք-5 օր, երեքը սրբոց տոներով։

ե. Լուսաւորչի պահք,-5 օր, երեքը սրբոց տոներով։

զ. Վարդավառի պահք-5 օր առանց տոների։

է. Աստուածածնի վերափոխման պահք-5 օր առանց տոների։

ը. Սուրբ խաչի վերացման պահք-5 օր, առանց տոների։

թ. Վարագայ ս. խաչի պահք-5-օր, երեքը սրբոց տոներով։

ժ. Ցինանակաց պահք-5-օր, երեքը սրբոց տոներով։

ժա. Սուրբ Յակոբի պահք-5-օր, երեքը սրբոց տոներով։

Սոցանից Աստուածայայտնութեան, Յարութեան, Վարդավառի, Վերափոխման և ս. Խաչի վերացման պահքերը կոչւում են նաւակատեաց պասեր և այդ օրերին-Աստուածայայտնութեան և ս. Յարութեան ճրագալուցի օրերն ու միւս երեք պասերի շաբաթ օրերը մեր եկեղեցին արգելած է մսի գործածութիւնը՝ հրէաներից որոշուելու համար, որոնք այդ օրերը զոհ էին անում։

գ. Սրբազան արարողութիւններ:

Բացի հասարակաց աղօթքից և ս. խորհուրդների ծէսերից՝ եկեղեցին ունի սրբազան արարողութիւններ. որք են.

Թաշալուայ. ինչպէս որ հրեշտակը իջնելով Պրոպատիկէ աւազանի մէջ՝ ջուրը խառնում էր և նորա մէջ լողացողները առողջանում էին իրանց ցաւերից, այնպէս էլ եկեղեցին ընդունած է ջրի օրհնութիւնը և առանձին կարգ ունի սահմանած դորա համար։ Քահանայն խաչով և աւետարանով երեք անգամ տեառնագրելով ջուրը՝ օրհնում է այն, որով սրբւում է ջուրը հաւատացեալներին սրբելու համար։

Ննջեցելոց թաղումն։ Հայոց եկեղեցին

ննջեցելոց թաղումը կատարում է առանձին հանդիսով, դորա համար Մաշտոցում որոշուած կարգով. թաղման կարգերը երեք տեսակ են. *տղայաթաղ, մեծի թաղման* և *քահանայաթաղ։*

Բոլոր ննջեցեալների թաղմանը միատեսակ գործ են դրւում հետևեալ ծէսերը. լուացում, պատանելը սպիտակ կտաւով, մոմ վառել և խունկ ծխել, ամբիծք ասել, թաղման, այգի, եօթնօրեայ, քառասնից և տարելիցի կարգ և գերեզմանօրհնէք։ Իսկ քահանաների, եպիսկոպոսների ու կաթուղիկոսների թաղման կարգը առաւել մեծ հանդէսով է լինում և բացի վերոյիշեալ ծէսերից՝ նոցա զգեստաւորում են ամբողջ զգեստով և օծում ս. Միւռոնով։

Լուանալը հնուց մնացած սովորութիւն է 'ի նշան յարգանքի դէպի ննջեցեալը։

Պատանը անապականութեան նշան է։ Մոմը Յիսուսի գերեզմանի երկու հրեշտակների օրինակն է։

Խունկ ծխելը յարգանքի նշան է դէպի հանգուցեալը։

Ամբիծքը առաքելոց ժամանակից է մընացած, որ կատարւում էր գիշերը ննջեցեալի մեղքերի թողութեան համար։

Այգի և եօթնօրէից կարգը առնուած է հին ուխտի եկեղեցուց և մեզանում կատարւում է ս. պատարագ մատուցանելով. իսկ քառասնեայը առաքեալների սահմանադրութեամբ է կատարւում, ի յիշատակ Քրիստոսի քառասնօրեայ համբարձման։

Տարելիցը և գերեզմանօրհնէքը կատարելով՝ աւետում ենք ննջեցեալներին երկրորդ գալստեան յոյսը։

Մաղթանք։ Կեանքի առանձին դիպուածներում եկեղեցին սահմանել է առանձին մաղթանք կատարել հայցելով տիրոջ օգնութիւնը· այն է երաշտի, մորեխի և ժանտախտի ժամանակ, թափօր կատարելով աշխարհիս չորս կողմերը· իսկ ծանր հիւանդութեան և այլ պատահարների ժամանակ կատարւում են մաղթանքներ ցանկացողի համար առանձին։

Տնօրհնէք. հաւատացեալների տները ս. Ծննդեան և Յարութեան տոներին աւետելու սովորութիւնը սկսուած է առաքեալների ժամանակից և պարտաւորական է մեր քահանաների համար ս. Աւետարանով և եկեղեցական զգեստով այդ տոներին գնալ ամեն տուն և օրհնել։

Կալօրհնէք և հնձանօրհնէք։ Կալը և հնձանը գլխաւորապէս օրհնում են այն նպա-

տակով, որ դոքա են ս. խորհրդի համար նուիրական ընծաները մատակարարում—հացը և գինին և միւս կողմից ս. Լուսաւորչի սահմանադրութեամբ քահանաներն օրհնում են կալը և հնձանը՝ երկրի բերքերից իրանց ապրուստի համար տասանորդ ստանալու նպատակով։

Մատաղ։ Մատաղը մեզանում զոհ չէ համարւում, որովհետև ինքն Տէրն մեր Յիսուս զոհուեցաւ խաչի վերայ մեր փրկութեան համար. այլ մեր մէջ ընդունուած է մատաղ անել նշանաւոր Տէրունական և սրբոց տոներին 'ի յիշատակ ննջեցելոց՝ աղքատներին կերակրելու համար, իբրև հոգեհաց. իսկ աղը օրհնում ենք մատաղացու կենդանուց սրբելու սկզբնական անէծքը։

Զգեստ, Սկիհ եւ Մաղզմայ օրհնել։ Եկեղեցական զգեստներն ու անօթները օրհնում ենք, որպէս զի նոքա որոշուին հասարակ գործածական զգեստներից և անօթներից և սրբուելով նուիրական գործածելի լինին Աստուծոյ սպասաւորութեան համար։

Է. Հոգեւոր աւանդութիւններ:

Կան և ուրիշ շատ հոգեւոր աւանդութիւններ, որոնք աւանդաբար հասել են մեզ կամ իբրև յիշատակ որ և է կրօնական դէպքի և կամ հաւատացեալների ջերմեռանդութիւնը արծարծելու միջոց:

Գլխաւոր աւանդութիւնները սոքա են.

Մասն: Ովքեր ս. պատարագին չեն հաղորդւում, այդպիսիներին ս. Սեղանից անմասն չթողնելու համար՝ բաժանում են *մասն* փոխանակ հաղորդութեան. մասը պատրաստւում է բաղարջ հացից և մինչեւ պատարագի վերջը պահւում է սեղանի ետեւը:

Ծամոց, յիշելիք եւ գանձանակ: Ծամոց և յիշելիք քրիստոնեան տալիս է քահանային, որ նա իւր ննջեցեալներն ու կենդանիները յիշէ անմահ պատարագին և միեւնոյն ժամանակ նորանով քահանան իւր ապրուստը հայթայթէ: Իսկ գանձանակը սահմանեցին առաքեալները՝ աղքատներին և կարօտեալներին օգնելու համար:

Ուխտ. Առաջին դարերում քրիստոնեաները սուրբերի նահատակութեան տարեդարձներին գնալով նոցա գերեզմանների վերայ

շինած մատուռներում, կատարում էին Աստուածպաշտութեան կարգը, բնութեան ահից, որից և մնաց սովորութիւն եկեղեցիները ուխտ գնալ:

Սեղան: Քրիստոնէութեան առաջին դարերում ննջեցեալի տէր հաւատացեալները սովորութիւն ունէին յատուկ սեղան պատրաստել և եկեղեցի տանել, ուր բոլոր հաւատացեալները միասին ժողոված վայելում էին. այստեղից մնացել է աւանդաբար, որ այժմ հինգ նաւակատիքի ոօներին ննջեցեալի տէրը սեղան է ուղարկում քահանային:

Ոռ բաժանելը: Ծաղկազարդի առաւօտեան ժամերգութեան «Փառք ի բարձունս»-ի ժամանակ բաժանում են ուռի ոստեր, 'ի յիշատակ Քրիստոսի Երուսաղէմ մտնելու, երբ Հրէաները ընդ առաջ գնացին նորան Ձիթենու և արմաւենու ճիւղերով:

Կարագ բաժանելը ոտնալուային: Կարագը յիշատակ է այն կնոջը, որ իւղով օծեց Յիսուսի գլուխը Սիմոն բորոտի տանը:

Հրավառութիւն: Հայաստանում Բագարինջ գիւղում Արամազդի մեհեան կար, որի տօնը կատարում էին փետրուար ամսին, հրապարակում կրակ վառելով և պար բռնելով

նորա շուրջ. երբ Տեառնընդառաջի տօնը սահմանուեցաւ փետրուար ամսի 14 ին, հեթանոսական տօնը վերացաւ, բայց փայտ վառելու սովորութիւնը մնաց մինչև այժմ։

Աղաւնի թռցնելու սովորութիւնը Վարդավառի տօնին մնացած է ի յիշատակ Նոյի աղաւնի թռցնելուն երբև ջրհեղեղից ազատուելուն յիշատակ։

2095

10931
10932
10933
10934

ՀՀ Ազգային գրադարան
NL0005350

ՀՀ Ազգային գրադարան
NL0005351

ՀՀ Ազգային գրադարան
NL0005135

ՀՀ Ազգային գրադարան
NL0005136